



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ

### Ժամանում Արդիս-Արեբա

Հունվարի 15-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, հինգ ժամվա խաղաղ և հանդիսաթիւքից հետո, Արդիս-Արեբա է ժամանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով:

Պայծառ ու զարնանային օր:

Հայոց Հայրապետին բերող եթովպական ինքնաթիւրը սահում է կանաչ դաշտի վրա և կանգ է առնում օդանավակայանում: Կամրջալի վրա երևում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, մինչ ներքեում փոթորկում է ծափերի ուրախ որոտը, թնդանոթի 21 համադարկերի ողջույնի մեջ:

Ուղեգորգերի վրայով առաջանում է Նորին Վեհափառությունը Հայլե Սելասիե Ա. Կայսրը, շրջապատված ավագանու անդամներով, բարձրաստիճան պետական պաշտոնյաներով, նախարարներով, եթովպական եկեղեցու և նախապես ժամանած արևելյան ուղղափառ եկեղեցիների՝ ղալտի, ասորի, հնդկի մալաբար եկեղեցական պատվիրակությունների ներկայացուցիչներով, ողջունելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ժամանումը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Խորեն Ա. Կաթողիկոսն Իր շքախմբով: Վեհափառ Հայրապետին դիմավո-

րում են նաև եգիպտահայոց բարեխնամ առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանը:

Կայսրը սրտառու է բարեպաշտությամբ համբուրում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ս. Աջը: Նորին Ս. Օծուրյունն ու Նորին Վեհափառությունը ողջույնի և բարի զայտյան ճառեր են փոխանակում:

Հանուն եթովպահայ գաղութի, հոգևոր հովիվ Տ. Կորյուն վարդապետ Մանվելյանը արծաթե ափսեի մեջ Վեհափառ Հայրապետին է մատուցում ավանդական աղն ու հացը:

Քույր եկեղեցիների պատվիրակությանց ներկայացուցիչները ծանոթանում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Նորին Ս. Օծուրյունն ու Նորին Վեհափառությունը, խանդավառ արտահայտությունների, սրտագին ծափերի և բարեմաղթությունների տարափի ներքո, առաջնորդվում են օդանավակայանի պաշտոնական ընդունելության սրահ:

Ամբողջ հայ գաղութը այստեղ է: Այսօր եթովպիայի հայերի համար ազգային հպարտության, անպատում ուրախության օր է: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այցի է եկել նաև եթովպական օրհնյալ հողի վրա ապրող Իր հայրենակարոտ և հավատավոր զավակներին, բերելով նրանց կենարար օրհնությունը Ս. էջմիածնի հազարամյա քա-



Հայրե Սեւասիե Կայսրը, ավագանին և Ռոզետր պետերը ողջունում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը Ադդիս-Աբեբա

րերի և սրտագին ողջույնը վերածնված հայ ժողովրդի և Մայր Հողի:

— Փառք քեզ Աստված, այս օրն էլ տեսանք,— մրմնջում են հայ սրտերն ու հոգիները:

Հունվարի 15-ը, որպես անմոռանալի ոսկեդեմ մի էջ, կզարդարի այսուհետև եթովպահայ գաղութի պատմությունը, շնորհաբեր այցելությանը ազգիս սիրեցյալ հայրապետի:

#### Եթովպական Ս. Երրորդություն եկեղեցում

Ժամը 10.30-ին, պատվո ոստիկանների ջոկատի ուղեկցությամբ, հյուրընկալ մեքենաների շարանը ուղղվում է դեպի մայրաքաղաքի Ս. Երրորդություն (Հայրե Սեւասիե) Մայր Տաճարը:

Տոնական տեսք է ստացել եթովպական գեղեցիկ Մայր Տաճարը, վեր խոյացած փարթամ, մշտադալար կանաչների և բուրումնավետ ծաղիկների ծոցում: Ուրախ և հանդիսավոր ղողանջում են զանգերը, ավետելով Ամենայն Հայոց Հայրապետի դալուստը: Ե-

կեղեցու ընդարձակ բակում, ծառերի զով հովանու ներքո հավաքված բազմահազար ժողովուրդ, հոգևորականություն, վանականներ ու երեցներ, իրենց հոգեկան բերկրանքն են հայտնում ազգային երգերով, պարերով, թմբուկներով:

Մայր Տաճարի առաջ, գլխավոր մուտքի մոտ, կանգ է առնում հանդիսավոր թափորը:


Պայծառ արևի ներքո փողփողում են եկեղեցական դրոշակներն ու խաչվառները, ոսկեգույն, արծաթագույն խաչերն ու եկեղեցական հանդերձանները՝ գունավոր, ինքնատիպ և ազգադրոշմ: Մորում է դեբտիրանների (վանականների) յուրահատուկ մեղեդին մեղմ, դաշնավոր ու միօրինակ: Կանանց զվարթ լալ, լառ-ն լցնում է մթնոլորտը:

Մեքենաներից իջնում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Կայսրը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, հոգևորականներ և եկեղեցական թափորով առաջնորդվում Մայր Տաճար, որը լիքն է պաշտոնական հյուրերով և աղոթողներով:

Ամենայն Հայոց Հայրապետին մատուցվում է բուրվառ ու խունկ: Նախքան Ս. Օծու-



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵՆԱՄԻԵ Ա. ԿԱՅՍՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ





Աղղիս-Արեբայի եթովպական Ս. Երրորդություն Մայր Տաճարը

քյունը խնկարկում է և ապա օրհնում ճշմարտապես բարի ու հավատացյալ, քրիստոնյա այս երկիրը, նրա Կայսրին ու ժողովրդին:

Արարողության ավարտին, նույն հանդիսությամբ, Կայսրն ու բոլոր հյուրերը առաջնորդվում են դեպի ինքնաշարժերը, ուր նախնի վեհափառություն Կայսրը հրաժեշտ է առնում և մեկնում իր պալատը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Լույ Մաքոնեն պալատը ուր մնում է Աղղիս-Արեբա իր այցելության ամբողջ շրջանին:

### Եթովպիան և Եթովպական Եկեղեցին

Եթովպիան գտնվում է «Աֆրիկայի եղջյուրներ»-ի բարձրավանդակի վրա: Ունի 1 184 000 քառակուսի կմ. տարածություն (450 000 մղոն) և շուրջ 20 000 000 բնակչություն:

Եթովպիան շրջապատված է Սուդան, Քենիա, Սոմալի, Ֆրանսիական Սոմալի երկրներով և Կարմիր ծովով:

Եթովպիան գեղեցիկ բարձրավանդակ է, իր լուսն լճերով, իր հարթավայրերով, իր գետերով, տաք աղբյուրներով, իր անապատներով: Տարվա 300 օրերին շողում է պայծառ

արևը եթովպիայի կապույտ երկնակամարում:

Եթովպիան աստվածաշնչական երկիր է (Սաղմ. ԿԸ 31), որը մեծ պետություն դարձավ քրիստոնեության առաջին դարերում և պահպանեց իր անկախությունը մինչև մեր օրերը: Ժողովուրդը հիմնականում Քամյան ցեղից է և մասամբ Սեմական:

Եթովպական Եկեղեցին հնագույն առաքելական եկեղեցիներից մեկն է (տե՛ս Գործք Ը 26—40, Փիլիպոս առաքյալի քարոզությունը և եթովպացի ներքինու մկրտությունը):

332 թվականին քրիստոնեությունը ընդունվում է երկրում որպես պաշտոնական կրոն:

Աֆրիկայում Եթովպիան հանդիսանում է «քրիստոնեական մի կղզի», որը տարբեր կրոնների, մշակույթների մրցադաշտում, անհուն զոհողություններով և նահատակության գնով, պահել է իր քրիստոնեական ուղղափառ հավատը, իր դավանությունը, իր աղգային ավանդությունները:

Դա հրաշքի համազոր իրողություն է: Եթովպական Եկեղեցին սերտ կապեր է պահպանել Ալեքսանդրիայի, Միջագետքի և Հայաստանի եկեղեցիների հետ: Ե և Զ դարե-

րում ընթացական Եկեղեցին ապրում է իր զարգացման շրջանը: Ե դարում այստեղ կազմակերպվում է ուժեղ վանականություն:

Մինչև ԺԲ դար ընթացիկ կատարված հրեական և ապա մահմեդական արշավանքների պատճառով, ընթացական Եկեղեցին ապրում է կղզիացած ինքն իր մեջ, անհուն զրկանքների և տառապանքների մեջ, կտրված աշխարհից, արյան, մարտիրոսության գնով պահելով իր ժողովրդին ու հավատը:

Միջին դարերում և հատկապես 1540—1590 թվականներին, ընթացական քույր Եկեղեցին և ժողովուրդը անլուր տառապանքներ են կրում պորտուգալյան կաթոլիկ հավատաքննիչների կողմից: Սակայն, հակառակ այս բոլոր հալածանքներին և մարտիրոսության, ընթացական Եկեղեցին վերջին հիսնամյակում ապրում է իր պատմության մեծագույն հոգևոր, իմացական և տնտեսական դարձումը:

Ընթացական Եկեղեցին այսօր ինքնավար, ինքնագլուխ Եկեղեցի է, որն իր ուրույն տեղն ունի Արևելքի հինգ ուղղափառ եկեղեցիների շարքում:

Ընթացական Եկեղեցին երկար տարիներ ենթակա էր Ալեքսանդրիայի Ղպտի Պատրիարքության: 1959 թվականին, երկու եկեղեցիների իմաստուն համաձայնությամբ, ընթացական Եկեղեցին ունեցավ իր առաջին բնիկ ընթացիկ Պատրիարքը, հանձին Նորին Սրբաթյուն Աթուհա Բասիլիոսի:

Ընթացական Եկեղեցին այսօր ունի 14 արքեպիսկոպոսական, 5 եպիսկոպոսական թեմ, 835 վանք, 12 000 ծխական եկեղեցի, 61 000 քահանա, 57 000 սարկավագ, 40 000 վանական (débteras) և 15 000 000 հավատացյալներ: Երկրի արևմտյան մասում կա հեթանոսական և մահմեդական փոքրամասնություն:

Ընթացական Եկեղեցին, Հայ Եկեղեցուն նման, ազգային եկեղեցի է և օջախ հայրենասիրության: Եկեղեցին և եկեղեցականությունը հավասար չափով բաժանել են ժողովրդի ուրախություններն ու տառապանքները: Ընթացական մշակույթը, քաղաքակրթությունը, ժողովրդի կյանքի ձևը, ապրելու եղանակները հիմնվել են քրիստոնեական մտածողության և սկզբունքների վրա: Եկեղեցիներն ու վանքերը եղել են մշակույթի կենտրոններ, դաստիարակության օջախներ, ուսման վարժարաններ:

Եկեղեցին, ժողովուրդը և պետությունը միասնական են: Եկեղեցին և պետությունը համարվում են «նույն գրքի երկու երեսները, այդ գիրքը ընթացիկն է», Կայսրը համարվում է երկրի և Եկեղեցու Գերագույն Պետը:

Ընթացիկ գերագնացապես գյուղատնտեսական երկիր է: Մեծագույն արտադրությունը սուրճն է, կաշին, արմտիքը: Երկիրը հարուստ է կենդանական և բուսական աշխարհով: Ունի կլիմայական տարբեր պայմաններ, բայց մեղմ և հաճելի կլիմա:

Ընթացիկ հարուստ է նաև պատմական հուշարձաններով և հնություններով:

Ընթացիկ վարչականորեն բաժանվում է 16 գավառների և շրջանների: Մայրաքաղաքն է Ադդիս-Աբեբան՝ «նոր ծաղիկ», սկսական, եկեղեցական, մշակութային և տնտեսական կենտրոն: Հիմնվել է 1904 թվականին «հրաշագործ աղբյուրներ»-ի, հանքային ջրերի ափին, Մենելիկ Բ կայսեր օրով, որպես արքայական բուժավայր: Մայրաքաղաքի հետագա կառուցումը, բարգավաճումը և այսօրվա առաջնակարգ դիրքը, իր կես միլիոն բնակչությամբ, սերտորեն կապված է Հայլե Սելասիե կայսեր անվան հետ, որը համարվում է Սողոմոնյան արքայական տան 255-րդ գահակալը:

Հայլե Սելասիեն արդարև համարվում է ոչ միայն ջերմ հայրենասեր, հավատքի պաշտպան, այլ նաև մեր ժամանակի քաղաքական և պետական ակնառու գործիչներից և ղեկավարներից մեկը, որի ավելի քան 35 տարվա գահակալության օրերին ընթացիկն, նրա ժողովուրդը և Եկեղեցին ապրում են մեծ նվաճումների և առաջադիմությունների մի ժամանակաշրջան:

#### Արևելքի ուղղափառ եկեղեցիների համաժողովի բացումը

Հունվարի 15-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Ադդիս-Աբեբայի Աֆրիկյան սրահ կոչված նորակառույց և գեղեցիկ նիստերի դահլիճում, պաշտոնապես բացվում է արևելյան ուղղափառ հինգ շույր եկեղեցիների համաժողովը: Սույն ժողովին մասնակցում են, ըստ կայսերական հրավերի, Արևելյան հինգ ուղղափառ եկեղեցիների պետերը իրենց առանձին պատգամավորություններով, այդ թվում՝

- 1) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին.
- 2) Ղպտի Ուղղափառ Եկեղեցին.
- 3) Ասորի Ուղղափառ Եկեղեցին.
- 4) Հնդկ-Մալաբար Ուղղափառ Եկեղեցին.
- 5) Ընթացական Ուղղափառ Եկեղեցին:

Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Կայսրի նախաձեռնությամբ հրավիրված արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համագումարը պատմական իրա-



Արևելյան Ռինգ ուղղափառ եկեղեցիների պետերի Ադդիս-Աբեբայի համաժողովի բացումը

դարձություն էր վերահիշյալ եկեղեցիների կյանքում:

Ավելի քան 1 500 տարիների երկար և մեծ բաժանումից հետո, առաջին անգամն էր, որ միմյանց մոտ էին գալիս դավանակից քույր եկեղեցիները, որոնցից յուրաքանչյուրը, ի դարից սկսած, զարգացրել էր իր ինքնուրույն եկեղեցական ծիսական կյանքը, մշակույթը, լեզուն, գրականությունը, պահել իր ուղղափառ հավատը, ազգային ոգին և ավանդությունները այն աստիճան, որ անհաղորդ էին մնացել միմյանց կյանքին և գործունեության և տեսականորեն միայն համարվում էին դավանակից և քույր եկեղեցիներ:

Այդ իսկ պատճառով, ողջունելի էր կայսերական նախաձեռնությունը, որպես առաջին փորձ, նախաքայլ՝ հետագա ավելի սերտ իրարհասկացողության և համագործակցության:

Եկեղեցական ժողովի գումարումից առաջ, տեղի էին ունեցել մասնակից եկեղեցիների աստվածաբանների խորհրդակցություններ, մտքերի փոխանակություններ և ճշտվել էին ժողովի սկզբունքներն ու օրակարգը և դրանց հետ կապված այլ հարցեր:

Եկեղեցական պատգամավորները գրավել են հանդիսության սրահում իրենց տեղերը: Օթյակներում ներկա են դիվանագիտական մարմնի, մամուլի ներկայացուցիչներ, դատորդներ և այլ հրավիրյալներ:

Նախագահության պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսը,

Անտիոքի Ասորի Պատրիարքը, Հնդկ-Մալաբար եկեղեցու Կաթողիկոսը և Եթովպական եկեղեցու պատրիարքական փոխանորդը:

Ժամը 11.5-ին ժամանում է Կայսրը և ընդունվում ջերմ ծափերով: Համագումարը սկսվում է աղոթքով և սաղմոսերգությամբ: Այնուհետև Նորին Վեհափառությունը հանդես է գալիս բացման գեղեցիկ ճառով: Կայսրը իր ուրախությունն է հայտնում, ողջունելով արևելյան ուղղափառ եկեղեցիների հոգևոր պետերի ներկայությունը և հույս է հայտնում, որ սույն ժողովը նշանակալիորեն կսատարի եկեղեցիների մերձեցման, իրարհասկացողության միջոցները և ճանապարհները որոնելու և կօգնի համաշխարհային խաղաղության իրագործման և պահպանման աշխատանքներին: «Եկեղեցին պետք չէ անտեսի իր այս գլխավոր պարտականությունը,— շեշտում է Կայսրը, որովհետև նա աղբյուրն է խաղաղության և եղբայրության»: «Այսօր աշխարհը,— շարունակում է Կայսրը,— կանգնած է մեծ երկրնտրանքի առաջ. մարդկային հանձարի արդյունքը եղող ահավոր զենքերը սպառնում են ոչնչացնել աշխարհը: Մարդկային ցեղը, որն է ժամանակից ավելի, այսօր կարիքն ունի Եկեղեցու աղոթքին և պաշտպանության»:

Իր ճառի վերջում Կայսրը մի անգամ ևս հույս է հայտնում, որ «Աստուծո կամքը կկատարվի և մարդկությունը կկարողանա առաջադիմել թե՛ հոգեկան և թե՛ նյութական մարզերի մեջ, առողջ հասարակության ծոցում: Աստված կղեկավարի այս ժողովի վի-

ճաբանությունները համաձայն իր կամքի և նրա զորությունը կօգնի Ձերդ Սրբություններին՝ բարեկամական և համագործակցական ոգով մեր հասարակաց հարցերին հասարակաց լուծումներ գտնելու:

Թո՛ղ Աստված օգնի մեզ, լուսավորի մեր բայերն ու խոհերը, ինչպես նա օգնեց Նիկիայի սուրբ ժողովի 318 հայրապետներին»:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

«Այսօր, Աստուծո ռդումությամբ, իբրև Ամենայն Հայոց Հայրապետ, Մեր շխառմբով եկանք Ձեր կայսերական հրավերով մասնակցելու, այս օրհնյալ երկրի մեջ գումարվող, արևելյան հին և պատմական փուլը եկեղեցիներու ժողովին, գլխավորելով Հայ եկեղեցվո պատգամավորությունը:

Մենք ուրախ ենք, որ այս ժողովին կմասնակցի Մեզի հետ նաև Կիլիկյան Աթոռին Դաճակալը՝ նորին Սրբություն Տ. Տ. Խորեն Ա. Կաթողիկոսը, իսկ կակնկալենք նաև ժամանումը երուսաղեմի և Կ. Պոլսո մեր սրբազան պատրիարքներուն:

Այստեղ, ուրեմն, ներկա է ամբողջ Հայ եկեղեցին:

Կուգանք Հայաստանեն, ուր կրթագավորն աստվածաշնչական Արարատը, և ուր առաջին դարուն սկզբնավորվեցավ Հայոց Առաքելական եկեղեցին, Ս. Թադեոսի և Ս. Բարթողիմեոսի փառաշուքով և նահատակությամբ:

Չորրորդ դարուն սկիզբներուն, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռամբ, վերջնապես հաստատվեցան և կազմակերպվեցան Հայոց եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը:

Հաջորդ դարերուն, Հայ եկեղեցվո և ժողովուրդի պատմությունը եղավ երկար նահատակության և զոհաբերության շղթա մը՝ հավատքի պահպանության համար, ինչպես ունեցան նույն նակատագիրը արևելյան մեր փուլը եկեղեցիները, որոնք մինչև այսօր պահեցին իրենց ուղղափառ հավատքը:

Բազում դարեր, մեզի դավանակից՝ փուլը եկեղեցիներու հետ անմիջական հանդիպումներ չենք ունեցած և ոչ ալ միասնաբար կրցած ենք աշխատիլ, ինչ-ինչ պատճառներով:

Սակայն հրաշալի է հաստատել, որ մեզմե յուրաքանչյուր անաղարտ պահած է իր պապերու հավատքը, ավանդությունները, ազգային ոգին, ուղղափառությունը նույնությամբ, ի գին անլուր զոհողությամբ: Եվ ահա այսօր, Ձերդ Վեհափառությունը կհրավիրե արևելյան այս հինգ եկեղեցիները, որ միա-

սին աղոթենք, միասին գործենք, միասին մտածենք մեր եկեղեցիներն ու մարդկությունը այսօր հուզող հարցերուն շուրջ:

Կրթեն, քե մեր դարը հրաշալիներու դար է: Թույլ տվեք, Վեհափառ Կայսր, Ձեր այս նախաձեռնությունը Մենք նկատենք նույնպես հրաշալի մը մեր օրերուն, հագնական և բարոյական արժեքներու ամրապնդման համապարհի վրան, որ պիտի ամրապնդե փրատունական հավատքը և խաղաղությունը աշխարհի վրա:

Ոգևորված Ձեր նախաձեռնությունեն, եկած ենք այստեղ և կաղարթենք, որ Տերը փառաբանությամբ ընդունի Ձեր այս մեծ նախաձեռնությունը:

Թող Աստված առատորեն տարածե իր օրհնությունն ու հովանին Ձերդ Վեհափառության, արքայական ընտանիքին, Ձեր օրհնյալ երկրի, Ձեր եկեղեցվո և Ձեր բարի ու հավատավոր ժողովուրդի վրա»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը տեղում. անգլերենի էր թարգմանում Տ. Գարեգին եպիսկոպոս Սարգսյանը:

Աղղիս-Արեբայի ժողովի բացման հանդիսությունը վերջանում է ժամը 12-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի աղոթքով ու «Պահպանիչ»-ով:

Հստ ծրագրի, ժամը 1.30-ին, մայրաքաղաքի Ս. Երրորդություն Մայր Տաճարում, հանդիսավորաբար պատարագ է մատուցում եթովպիայի պատրիարքական փոխանորդ ամենապատիվ Արունա Թեոֆիլոսը, Կաչարի, զահաժառանգի, բոլոր հոգևոր պետերի, ավագանու, եկեղեցական պատվիրակությունների և բազմահազար ժողովրդյան ներկայությամբ:

Սուրբ պատարագի սկզբում կազմվում է եկեղեցական հսկա մի թափոր, որը, ըստ եթովպական բարեբաաստիկ սովորության, Մայր Տաճարի շուրջ երեք անգամ պտույտ կատարելուց հետո, խնկով, աղոթքով և սաղմոսերգությամբ, նվագով ու պարով, բազմահազար հավատացյալ ժողովուրդի խանդավառ բացականչումների, ծափերի, ծնծղանների հնչյունների տակ, մուտք է գործում եկեղեցի:

Երեկոյան ժամը 6-ին, Աֆրիկյան սրահում, տեղի է ունենում արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հոգևոր պետերի համաժողովի երկրորդ նիստը:

Ինչպես հիշվեց ավելի վերևում, Կաչարական հրավերով և նախապես տրված պաշտոնական հավատարեցումների հիման վրա, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Աղղիս-Արեբա էր ժամանել մասնակցելու արևելյան ուղղափառ եկեղեցիների պետերի ժողովին, ի գլուխ Հայաստանյայց Առա-



Հայ եկեղեցու պատգամավորությունը Ադդիս-Աբեբայի համաժողովում

քիական եկեղեցու միակ պատվիրակության: Այնուամենայնիվ, ժողովի այս նիստում հանդես եկան անսպասելի զժվարություններ և անսպասելի միջամտություններ Հայ եկեղեցու միակ պատվիրակության սկզբունքի դեմ: Դժբախտաբար որոշ քույր եկեղեցիներ նպաստեցին այս կացության ստեղծման:

Այս պատճառով ժողովն իր աշխատանքները ընդհատեց և չկարողացավ ղուժարվել երկու օր շարունակ: Հարթելու համար զժվարությունները, տեղի ունեցան բանակցություններ Ամենայն Հայոց Հայրապետի և Տանն Կիլիկիո Կաթողիկոսի միջև, որոնք սակայն հստակ եզրակացության չկարողացան հանգել:

Մայր Աթոռի օրինական տեսակետն այն էր, որ Հայոց եկեղեցին, լինելով մեկ եկեղեցի, պետք է ներկայացվի մեկ և անբաժան պատվիրակությամբ, իբր նախագահ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետին՝ իբրև Գլուխ եկեղեցու, իսկ Տանն Կիլիկիո Կաթողիկոսին վերապահել պատվիրակության

փոխ-նախագահի պատիվը և զիրքը՝ իբրև Գահակալ Տանն Կիլիկիո Աթոռի:

Եվ որովհետև այնուամենայնիվ հնարավոր չեղավ համաձայնության եզր գտնել, Տ. Տ. Վազգեն Կաթողիկոսը և Տ. Տ. Խոսեմ Կաթողիկոսը անհրաժեշտ գտան քույր եկեղեցիները չզբաղեցնել Հայ եկեղեցու ներքին հարցերով և որոշեցին պաշտոնապես չմասնակցել ժողովին, այլ միայն ներկայացուցիչներ ուղարկել իբրև դիտորդներ: Այս նպատակով երկու հայրապետները ստորագրեցին և ժողովի քարտուղարության ուղարկեցին հետևյալ հայտարարությունը.

«Նկատելով, որ Հայաստանյայց եկեղեցվո մասնակցության պարագան որոշ զժվարություններ հարույց արեկյան ուղղափառ եկեղեցիներու ժողովի աշխատանքներուն համար, և որպեսզի ժողովական աշխատանքները իրենց բնական ընթացքով հառաջանան, Մենք, Վազգեն Ա. Մայրապետն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց և Խորեն Ա. Կաթողիկոս Տանն Կիլիկիո, որոշեցինք համաձայնաբար, որ մենք չմասնակցինք

այս ժողովին անձնապես և հատուկ պատվիրակություններով: Կնշանակենք երկուական հոգիներ, որպեսզի մասնակցին ժողովի աշխատանքներուն դիտողի հանգամանքով և տեղեկագրեն մեզի ժողովի արդյունքներու մասին, որպեսզի ըստ այսմ մենք հայտենք մեր կարծիքները»:

Հարցը այսպիսով փակվեցավ և միջեկեղեցական ժողովը իր աշխատանքներն սկսեց հունվարի 17-ին:

**Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Ս. Երրորդության Մայր Տաճարում**

Հունվարի 16-ին, շաբաթ, առավոտյան ժամը 7-ին, ըստ հանդիսությանց ծրագրի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Երրորդություն Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց, ի ներկայության Կայսրի, գաճաճառանգ իշխանի, առփայական ընտանիքի և Բույր. եկեղեցիների պետերի և պատգամավորների:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էին Ս. Տ. Խոսեան Կաթողիկոսն իր շքախմբով, Ս. Մամբրե արքեպիսկոպոսը, Ս. Կորյուն վարդապետը, գաղութահայ վարչությունը, հայ գաղութը և դպրոցի աշակերտությունը:

Ս. Սեդանին սպասարկում էին Ս. Կոմիտաս Եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Ս. Արսեն վարդապետ Բերբերյանը:

Սուրբ պատարագի Եկմալյան բառաձայն երգեցողությունը հաջողությամբ կատարում էր Մուրադյան երգչախումբը, շնորհալի ղեկավարությամբ երաժշտագետ Ներսես Նալբանդյանի:

Սուրբ պատարագի ավարտին, հանդիսավոր իրադրության մեջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Հայ Եկեղեցու պատվիրակության մասնակցությամբ, մի մեծ և գեղեցիկ ծաղկեպսակ է զետեղում արկածահար վախճանյալ Լույ Մաֆունեն իշխանի թարմ շիրիմի վրա, որը գտնվում է Ավագ Սեդանի ներքո:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այս ինքնարուխ և համակրական արտահայտությունը խորապես հուզում է բարեպաշտ Կայսրի հայրական սիրտը և մասամբ մխիթարում, սփոփում նրա մեծ վիշտը:

#### Կայսերական ունկնդրություն

Հունվարի 16-ին, շաբաթ, ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, «Չորեկյան» պալատում, պաշտոնական այցելություն է տալիս Նոբին Վեհափառություն Կայսրին:

Պալատի գլխավոր շքամուտքի առաջ, Հայոց Հայրապետն ընդունվում է զինվորական պատիվներով: Կայսրն անձամբ դիմավորում է Հայոց Հայրապետին, շրջապատված վարչապետով, նախարարներով, բարձրաստիճան զինվորականներով, և առաջնորդում ընդունելության դահլիճ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին եգիպտահայոց առաջնորդ Ս. Մամբրե արքեպիսկոպոսը և շքախմբի անդամները:

Արքայական ունկնդրության և զրույցի ժամանակ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Նոբին Վեհափառություն Կայսրը ողջունի խոսքեր են փոխանակում սրտագին, ջերմ մթնոլորտում: Ի նշան համակրության և բարեկամության, ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը Կայսրին է նվիրում արծաթյա գեղեցիկ մի մեծ խաչ, գործ Երեանի հայ ոսկերիչ վարպետների, հին հայկական խաչքարերի ոճով պատրաստված: Հավատացյալ Կայսրը հուզումով և երախտագիտությամբ է ընդունում Հայոց Հայրապետի բարեպաշտական սույն նվերը:

Ժամը 2-ին, նույն պալատում, տրվում է արքայական ճաշկերույթ եկեղեցական պետերի պատվին, որին մասնակցում են նաև պատվիրակությանց բոլոր անդամները:

Ընդունելությունն անցնում է ջերմ, եղբայրական մթնոլորտում:

Երեկոյան ժամը 6-ին, Քաակա եկեղեցում, որն արքայական դամբարան է, տեղի է ունենում աղոթք և եկեղեցական պաշտամունք, ի ներկայության Կայսրի և բոլոր հոգևոր պետերի:

Այնուհետև, արքայական ընտանիքի հին և նոր հանգուցյալ հոգիների խաղաղության համար, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ Հայ Եկեղեցու կողմից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Տաճն Կիլիկի Կաթողիկոսի հանդիսադրությամբ:

#### Վեհափառ Հայրապետն ընդունում է Եթովպահայ գաղութային ժողովի անդամներին

Հունվարի 16-ին, շաբաթ, երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, պալատի հանդիսությանց դահլիճում, ընդունում է պաշտոնական այցելությունը Եթովպահայ գաղութային ժողովի անդամներին:

Եթովպահայ գաղութային ժողովը 7 հոգուց բաղկացած. մի մարմին է, որը հոգևոր հովիի հետ համագործակցաբար, վարում է Եթովպիայի հայ գաղութը:

Եթովպահայ գաղութը սահմանադրականորեն եզրկալտուի հայոց թեմի մեջ է մտնում, որպես հոգևոր հովիվություն:

Գաղութահայ ժողովի նորընտիր անդամներն են Սամվել Պեհեսնիկյանը (ատենապետ), Իլիաս Ճերեճյանը (փոխ-ատենապետ), Երվանդ Տերենցը (ատենադպիր), Մուշեղ Երևանյանը (գանձապահ), Գևորգ Սվաճյանը, Լևոն Երզնկյանը և Պեհ Կարապետյանը (անդամներ):

Գաղութահայ ժողովի հովանու տակ, գործում են Աղդիս-Աբեբայում մի շարք այլ կաղմակերպություններ, այդ թվում դպրոցի հոգաբարձություն, եկեղեցասիրաց հայ տիկնանց միություն, բարեսիրաց տիկնանց միություն, Հայկական բարեգործական ընդհանուր միություն մասնաճյուղ, «Արարատ» մարմնակրթական միություն, Մուրադյան երգչախումբ:

Եթովպահայ գաղութը, որը շուրջ յոթանասուն տարվա պատմություն ունի, այսօր բաղկանում է շուրջ 1 200 հոգուց, մեծ մասամբ հաստատված մայրաքաղաքում և շուրջ 70 հոգի Դիրե-Դավայում: Գաղութի մեծամասնությունը կիլիկեցիներ են, այդ թվում այնթապցիներ, մարաշցիներ, արաբկիրցիներ:

Աղդիս-Աբեբայի հայոց Ս. Գևորգ եկեղեցին շինվել է 1929 թվականին: Եկեղեցին ունի իր սեփական առաջնորդարանը:

Եկեղեցու բակում է կառուցված նաև աղդալին Գևորգով դպրոց-նախակրթարանը, որն ունի 150 երկսեռ աշակերտություն, 6 դասարան նախակրթական բաժնում (Ա—Ձ դասարան) և 4 դասարան մանկապարտեզի («ծիլ», «կոկոն», «բողբոջ», «ծաղիկ»):

Դպրոցի տնօրենն է ծանոթ մտավորական պր. Կառապետ Փալատյանը: Դպրոցն ունի 16 հոգուց բաղկացած իր ուսուցչական կազմը, մեծ մասամբ բարձրագույն կրթությամբ, որոնց թվում է Էբեմինե Գալեմֆայանը՝ շրջանավարտ Երևանի Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտից 1963 թվականին:

Օտար դպրոցներում հայ ուսանողության թիվը հասնում է շուրջ 70 հոգու:

Եթովպահայ գաղութը հայրենասեր, եկեղեցասեր և լավ կաղմակերպված, տնտեսապես բարգավաճ գաղութ է: Հայերը ընդհանրապես զբաղվում են առևտրով և արհեստներով, սիրված և գնահատված են Կայսրից, տեղական իշխանությունից և ժողովրդից:

Գաղութի հայությունը իր աշխատասիրությամբ, կարգապահությամբ, հյուրընկալ երկրի և ժողովրդի հանդեպ իր օրինավոր կեցվածքով և հավատարմությամբ առանձ-

նապես արժանացել է նորին Վեհափառություն Հայրե Սելասիե Կայսրի հոգածության, ուշադրության և պաշտպանության: Եթովպահայ գաղութը եղբայրական սերտ կապի և սրտագին հարաբերության մեջ է եթովպացի ժողովրդի և եթովպական եկեղեցու հետ: Հոգևոր հովիվը միշտ հրավիրվում է պետական, եկեղեցական մեծ տոներին և ներկայացնում է հայ համայնքը:

Թվով փոքր, բայց հայրենասիրությամբ և սրտով մեծ այս հայ գաղութից Երևանի տարբեր ուսանողական բարձրագույն հաստատություններում սովորում են շուրջ 19 հայ ուսանող աղջիկներ և տղաներ:

Ուրեմն հունվարի 16-ին, շաբաթ երեկոյան, եզրկալտահայ թեմի բարեխնամ առաջնորդ Ս. Մամբրե աբեպիսկոպոսը նորին Ս. Օծուքյանն է ներկայացնում ժողովի անդամներին, հոգևոր հովիվ Ս. Կորյուն վարդապետի գլխավորությամբ:

Հնդունելության ներկա են նաև Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները:

Գաղութահայ ժողովի ատենադպիր Ս. Պեհեսնիկյանը գրավոր մի ուղերձով ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր սույն պատմական այցելությունը Աղդիս-Աբեբա և ողջ գաղութի որդիական սերն ու հավատարմությունն է հայտնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նրա արժանընտիր Գահակալին:

Եթովպահայ գաղութի հոգևոր հովիվ Ս. Կորյուն վարդապետ Մանվելյանը ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ հուզիչ, ջերմ ուղերձը.

Վեհափառ՝ Տեր.

Թույլ տվեք մի քանի խոսքով արտահայտել մեր և մեր Եթովպահայ գաղութային ժողովի գործակիցներուս զգացումները Ձերդ Սրբության հանդեպ:

Ձեր հավատավոր, հոգևոր և հայրենասիրական խոսքերով իրապես հուզեցիք և խանդավառեցիք մեզ: Երկիրքի մեջ, վերը, մեր միակ Հայրը Աստված է, ինչպես կսորվեցնեմ եղի Տերունական աղոթքը, իսկ վարը, երկրի վրա, մեր հայության միակ հայրը՝ Ձերդ Սրբությունը:

Ձերդ Սրբության թանկագին խոսքերը եթե լուր պայմանադրական խոսքեր ըլլային, այնքան պիտի շաղկերին մեր վրա:

Ձեր անձին բարձր հմայքը, Ձեր բաղյր հայրապետական գուրգուրալից ժպիտը, որ միշտ այնքան անուշ կծաղկի Ձեր դեմքին վրա, Ձեր արի և անվեհեր հայու կեցվածքը, Ձեր սրտին բարությունը անբիծ, որ միշտ կցուլա Ձեր բոլոր խոսքերուն և գործերուն մեջ, Ձեզ կընծայեն պայծառ մարմնացումը բոլոր սրբություններու: Ձեր բարձր անձին

մեջ կամրողչացնեք մեր Ս. Եկեղեցին իր բարձր նվիրական սկզբունքներով, հավատքով, հույսով և սիրով, հայության առավելությունները իր բոլոր առաքինություններով: Մեկ խոսքով, Ձեզմով մեզի կենդանացնա հայությունը իր սրբաշնասուրբ Եկեղեցիով:

Կիսատանանք միշտ մտիկ ընել, հետևել Ձեր խոսքերուն և օրինակին:

Ձերդ Սրբությունը կուգա մեր վերածնած գեղեցիկ հայրենիքեն, լույսի և երգի մայրաքաղաք Երևանեն, և մեր հոգիներու հարազատ կեցրոն Ս. Էջմիածնեն, ծաղիկներու գեղեցիկ մայրաքաղաքը՝ Աղդիս-Աբերա, Եթովպիա: Սրտովին համոզված ենք և կհավատանք, որ Ս. Էջմիածինը ոչ միայն մեզի՝ հայերու համար շատ սիրելի և պաշտելի է, այլ մենք միշտ հավատացած և սորվեցուցած ենք, որ քրիստոնյա համայն աշխարհի նվիրական սրբավայրն է, իր ավանդություններով պատմական:

Արևելյան ուղղափառ եկեղեցիներու Աղդիս-Աբերայի ժողովին պատեհությամբ, Ձերդ Սրբության մեզի այցելությունը Ձեր գլխավորած պատվիրակությամբ մեզ բոլորիս մեծ ուրախություն և խանդավառություն կպատճառե: Դուք նախախնամութենե մեծագույն պարգևն եք մեզի՝ հայության և Հայ Եկեղեցվո տրված:

Եթովպահայ գաղութային ժողովի սիրելի գործակիցներուն հետ Ձեր շատ սիրելի Վեհափառության Ս. և օծյալ Աջը համբուրելով, բոլոր սրտով կըսենք. Բարի եկաք, Վեհափառ Տեր, հազար բարի:

Անաված հարցն մերոց երկար և արդյունավոր կյանք տա Ձեզի, և անսասան պահե հայոց Լուսավորչի Առաքելական Գահը և Գահակալը, Արարատի դիմաց, Մայր Հայրենիքին մեջ դրախտավայրը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, խորապես հուզված, խոսք է առնում ընդունելության ժամանակ, իր ուրախությունն ու բացառիկ գոհունակությունն է հայտնում արտահայտված հուզիչ, ջերմ, անմիջական խոսքերի և արտահայտությունների համար, շնորհավորում է գաղութային հարգարժան ժողովի նորընտիր կազմը, հաջողություն մաղթելով նրա ազգանվեր և եկեղեցաշեն բոլոր գործերին:

Նորին Ս. Օծությունը, իր հայրապետական օրհնության հետ, ներկաներին բաժանում է «Էջմիածին» գեղեցիկ կրթանշանները, որպես հուշ և հիշատակ Մայր Աթոռից:

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և աջահամբույրով:

## Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ հայոց Ս. Գևորգ Եկեղեցում

Հունվարի 17-ին, կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես իր բնակարան-պալատից առաջնորդվում է Աղդիս-Աբերայի հայոց առաջնորդարանը, ուր ընդունվում է ժողովրդական ջերմ խանդավառությամբ և սրտագին ծափահարություններով:

Առաջնորդարանում զգեստավորվելուց հետո, Նորին Ս. Օծությունը, եկեղեցական թափփորով, աղոթքով ու խնկով և ամպնովանուտակ, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Ս. Գևորգ եկեղեցի՝ սուրբ պատարագ մատուցելու և Բանին կենաց քարոզությանը և հայրապետական իր պատգամով մխիթարելու, ողևորելու իր զավակներին:

Ժամը 10.30-ին սկսվում է սուրբ պատարագը: Սեղանին սպասարկում են Ս. Մամբրե, Ս. Կոմիտաս սրբազաններ, Ս. Կորյուն, Ս. Մեսրոպ, Ս. Զավեն և Ս. Արսեն վարդապետներ:

Եկեղեցին լիքն է հավատացյալներով: Ողջ գաղութի համար այսօր ուխտի, աղոթքի և ազգային հպարտության օր է:

Մուրադյան երգչախումբը, Ն. Նալբանդյանի ճարտար ղեկավարությամբ, կատարում է եկամայան պատարագը, վերնատան մեջ: Ժամը 11-ին ժամանում է Նորին Ս. Օծություն Ս. Խորեն Ա Կաթողիկոսը իր շքախմբի հետ և տեղ է գրավում ձախակողմյան դասում, գահի վրա:

Ամեն կողմ խունկ, աղոթք, վեհություն և վերացում:

Սուրբ պատարագը նույն հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է:

Պատարագիչ Վեհափառ Հայրապետը, խորին ներշնչվածով և հայրենասիրական ոգևորությամբ, խոսում է իր գեղեցիկ քարոզներից մեկը՝ «Եւ ի վերայ ամենայնի առէ՛ք զվաճանն և առաւելոյ» բնաբանով:

Նորին Ս. Օծության քարոզը հայրական սրտագին մի կոչ է, սպառազինվելու Աստուծո հոգևոր գեներրով, ճշմարտության, արդարության, խաղաղության և սիրո վեհ զգացումներով և մանավանդ վառ ու պայծառ հավատով, տեսիլքով՝ դեպի մեր Ս. Եկեղեցին, ժողովուրդը և հայրենիքի լուսն գալիքը:

Այնուհետև, Հայոց Հայրապետը խոսում է այն մասին, որ ինքը օրհնություն է բերել Ս. Էջմիածնից, հայրենի մեր սուրբ տաճարներից, Արարատից, Օշականի Մեծ Սրբից և ողջուն՝ Հայոց աշխարհից, վերածնված հայ ժողովրդից, լույս քաղաք Երևանից և հայրենիքից:



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը քարոզում է Աղդիս-Արեքայի հայոց Ս. Գևորգ եկեղեցում



Մի տեսարան Եթովպական Եկեղեցու Զրորինյաց Ռանդիսությունից

նաբնակ իրենց հարազատներից: Հայրապետական իր պատգամի մեջ Նորին Ս. Օծությունը կոչ է անում համախմբվել մեր Ս. Եկեղեցու շուրջ, ապրել համահայկական հարցերով, լինել միասնական մեր ազգային ձգտումների, երազների կենսագործման ճանապարհի վրա, շտարվել երկրորդական, ավելորդ խնդիրներով:

Նորին Ս. Օծությունը իր քարոզի վերջում թելադրում է եթովպահայ համայնքին՝ բոլորվել գաղութահայ նորընտիր ժողովի շուրջ, հոգևոր հովիվ Ս. Կորյուն վարդապետի շուրջ, որն ավելի քան երեք տարիներ օգտակար աշխատանք է կատարում եկեղեցում, դպրոցում, համայնքի ծոցում: Իբրև հայրապետական գնահատություն, Վեհափառ Հայրապետը հովվի կուրծքը զարդարում է վարդապետական խաչով:

Հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Տանն Կիլիկիո Կաթողիկոսը հանդիսավորապես առաջնորդվում են առաջնորդարան, ուր Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, որպես հուշ հայրապետական իր այս այցելության, աջահամբույրի ընթացքում մեկական խաչ է բաժանում բոլոր ներկաներին, որոնք երկյուղած, ուրախությամբ և ծնրադիր ստանում են խաչերը՝ մասունքների նման:

Հունվարի 18-ին, Երկուշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել մի շարք պաշտոնական այցելություններ:

#### Զրորինյաց մեծահանդես տոնակատարություն

Մայրաքաղաքը և ողջ եթովպիան ապրում են Փրկչի Ս. Մենդյան տոների խորհրդով և հանդիսավոր տրամադրությամբ:

Փակ են պետական պաշտոնատները, դպրոցները, խանութները: Հունվարի 18-ը և 19-ը ազգային մեծ տոն է:

Եթովպացիք տարվա մեջ շատ տոներ ունեն: Բայց նրանցից երկուսը մեծագույն համաժողովրդական ազգային տոներ են: Առաջինն է Մասկալը կամ Խաչվերացի տոնը սեպտեմբերին, և Տիմկատը կամ Փրկչի Մկրտության տոնը՝ հունվարի 18-ին, որը կատարվում է մեծահանդես ուխտագնացությամբ, համաժողովրդական խանդավառությամբ:

Հունվարի 18-ին, Երկուշաբթի, տոնի նախատոնակն է:

Հետմիջօրեի ժամը 4-ին, Զոյ-Հո-Մեդայի արքայական ընդարձակ դաշտում, սկսվում է ջրօրհնաց տոնակատարության հանդիսության բացումը:

Արեւելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հետ պետերը, իրենց պատվիրակության քաղաքում, առաջնորդվում են դաշտ, ներկա լի-  
նյու հանդիսությունը:

Մովսէսի մասին և տոնական բարձր տրամա-  
նություններ համակված, բարի ու հավատա-  
լից ժողովուրդը, էարդապահ ու խաղաղ,  
կարել է կանաչ, ընդարձակ դաշտը, պար-  
ծեկները:

Ամեն կողմ խաչեր, խաչվառներ, երգ ու  
ծնծություն: Դաշտի կենտրոնում բարձրա-  
ն է արքայական հսկա վրանը, եթովպական  
դրոշակներով զարդարված, որի հովանու  
ներքո հույրընկալվում են հոգևոր պետերը,  
պատվիրակության անդամները, պաշտո-  
նական այլ հյուրեր, ավագանին ու բարձրաս-  
տիճան կառավարական ներկայացուցիչները:  
Վանականների խաչաբազմա խումբը,  
մեղմ ու օրորուն, հնչեցնում է Մնդյան ու  
կրտության մեղեդին՝ թմբուկի, ծնծղանի-  
կի և պարի ընկերակցությամբ, բազմապատ-  
մելով սրտերի մեջ օրվա կրոնաբույր խոր-  
քերի և տոնի բերկրանքը:

Ընդհանուր խանդավառության, հարգան-  
քի և սիրո արտահայտությունների մեջ, ժա-  
նանում է Կայսրը և առանձին-առանձին ող-  
բագուրվելուց հետո հոգևոր պետերի հետ,  
աղագում է իր Գահի վրա:

Աշխուժանում են մեղեդին ու պարը: Վա-  
նականների երգը, օրվա տոնին նվիրված,  
թե և առնում, սավառնում դաշտի վրա ու  
տարածվում հեռու, հեռու:

Միում են ալ, կանաչ, կապույտ խաչվառ-  
ներն ու դրոշակները, փայլվում գույնզգույն  
հովանոցները:

Բարեպաշտ Կայսրի ներկայությամբ բաց-  
ված է հռչակվում Մկրտության տոնի հան-  
դիսությունը:

Ժամը 5-ին, հոգևոր պետերը հրաժեշտ են  
առնում Կայսրից, շնորհավորելով Փրկչի  
Մկրտության նախատոնակը և վերադառնում  
պալատ:

### Այցելություն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն Աբունա Բասիլիոսին

Հունվարի 18-ին, երկուշաբթի, երեկոյան  
ժամը 6-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայ-  
րապետը, իր շքախմբով, պաշտոնական այ-  
ցելություն է տալիս Եթովպիայի Պատրիարք  
Նորին Սրբություն Բասիլիոսին, որը հիվան-  
դության և ծերության պատճառով, չէր կա-  
րողանում մասնակցել հանդիսությանը:  
Պատրիարքարանի դռան առաջ, Ամենայն  
Հայոց Վեհափառ Հայրապետը դիմավորվում  
է բարձրաստիճան հոգևորականների կողմից

ու զանգերի ղողանջի ներքո, եկեղեցական  
թափորով, շարականով ու խնկով, առաջ-  
նորդվում է հիվանդ և ծերունագարդ Պատ-  
րիարքի մետ, որն անհուն հրախտագիտու-  
թյամբ և շնորհակալությամբ է ընդունում  
Հայոց Հայրապետի եղբայրական այցելու-  
թյունը:

Երկու բույր եկեղեցիների պետերի, հայ և  
եթովպացի բարձրաստիճան հոգևորական-  
ների միջև տեղի է ունենում ջերմ, եղբայրա-  
կան զրույց, սիրալիք մթնոլորտում:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը  
Աբունա Բասիլիոսին է նվիրում Ս. Էջմիածնի  
նկարով արձաթյա մի ափսե:

Ավելի քան մեկ ժամ տևող զրույցից և  
սիրալիք տեսակցությունից հետո, Հայոց  
Հայրապետը հրաժեշտ է առնում Սրբազան  
Պատրիարքից, ներկա հոգևորականությունից  
և վերադառնում պալատ:

Այս այցելությամբ, մի նոր էջ է ավելա-  
նում հայ և եթովպական եկեղեցիների և եր-  
կու հնագույն քրիստոնյա ժողովուրդների  
դարավոր պատմության նորագույն տարե-  
գրությանն ընդ:

### Ժամանում Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Ս. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի

Հունվարի 19-ին, երեքշաբթի, առավոտյան  
ժամը 8.30-ին, Աղդիս-Արբրա է ժամանում  
Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան  
պատրիարք հայրը, ընկերակցությամբ Ս.  
Շահե վարդապետ Անեմյանի:

Օղանավակայանում, հանուն Ամենայն Հա-  
յոց Վեհափառ Հայրապետի, սրբազան պատ-  
րիարքի ժամանումը ողջունում են Ս. Կոմի-  
տաս եպիսկոպոսը և Ս. Մեսրոպ վարդապե-  
տը, և հանուն Ս. Ս. Խոսեմ Կաթողիկոսի՝ Ս.  
Սահակ արքեպիսկոպոսը:

Եթովպահայ գաղութի անունից, սրբազան  
պատրիարք հոր գալուստը ողջունում են  
հոգևոր հովիվ Ս. Կոռյուն վարդապետը, գա-  
ղութահայ ժողովի անդամներ և համայնքի  
ներկայացուցիչներ:

Սրբազան պատրիարք հայրը առաջնորդ-  
վում է Լույ Մաքոնեն պալատը, ուր նորին  
ամենապատվության հատկացվում է առան-  
ձին հարկաբաժին:

Այնուհետև, պալատի ընդունելության շքեղ  
դահլիճում, սրբազան պատրիարք հայրը ող-  
ջագուրվում է Ամենայն Հայոց Վեհափառ  
Հայրապետի, Տանե Կիլիկիո Կաթողիկոսի և  
բոլոր ներկաների և ազգայինների հետ:

Պալատում Երուսաղեմի հայոց ամենապա-  
տիվ սրբազան պատրիարք հոր ժամանումը



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը Ադդիս-Աբեբայի Ս. Երրորդություն Մայր Տաճարում

ողջունում են նաև քույր եկեղեցիների հոգևոր պետերը և պատվիրակությանը անդամները: Ժամը 10-ին, բոլոր հոգևոր պետերը ներկա են լինում Զոյ-Նո-Մեղայի դաշտի մոտ, համանուն առվակի ափին, ջրօրհնյաց հանդիսության, որին նախագահում է Նաբին Վեհափառություն Հայր Սելասիե Կայսրը:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը պալատում ընդունում է Ադդիս-Աբեբայի հույն օրթոդոքս համայնքի առաջնորդի այցելությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոսք է ասում ավելի քան հարյուր հազար հավատացյալների ներկայությանը

Հունվարի 20-ին, չորեքշաբթի, Զրօրհնյաց եօթրյա տոնի վերջին օրն է, ինչպես նաև, ըստ եթովպական օրացույցի, Միքայել հրեշտակապետի տոնը, երկրի մեծագույն ժողովրդական տոնը:

Վաղ առավոտյան, բազմահազար ժողովուրդը լցրել է մայրաքաղաքի հնագույն և

պատմական եկեղեցիներից Ս. Միքայել հրեշտակապետ եկեղեցին, հարակից թաղերը և բացատները, այգիներն ու պալատները: Ավելի քան 100 000 հավատացյալ ժողովուրդ եկեղեցու շրջափակում, մայթերի վրա, փողոցների երկայնքով, ծառերի հովանու ներքո սպասում է Կայսրի ու հոգևոր պետերի գալուտյան:

Ժամը 10-ին, ինքնաշարժերի անթիվ շարանը կանգ է առնում եկեղեցու առաջ, ընդարձակ հրապարակի վրա: Եկեղեցու արևելյան մասում, սաղարթախիտ ծառերի հովանու տակ, պատրաստվել է մասնավոր արքայական վրան և բեմ Կայսրի, հոգևոր պետերի, պատվիրակությանը անդամների և պաշտոնական հյուրերի համար:

Հոյակապ և տպավորիչ մի տեսարան է պարզվում դիտողի աչքերի առաջ, կանաչ ֆունի վրա, մարգագետինների, դաշտերի և ծառերի, մարդկային բազմության մի սպիտակ ծով, որը մեղմորեն օրորվում է, ալեկոծվում, կարծես թեթև քամուց, այսինքն հոգեկան ուրախությունից, բերկրանքից, բայց խա-

897 კატოლიკოსი იოანე-მამიაძისთან, ყაზახეთში, 1917 წელს



աղ, կարգապահ և վերացած օրվա խորհրդով և հանդիսության շքեղանքով: Վրանի տակ, ծառերի զով շվաքում, տեղ և գրավել արևելյան հինգ ուղղափառ եկեղեցիների գահականները, իրենց պատվիրա- ղությանն անդամներով: Եվ ահա ժամանում է Վայսը և հանդարտ, ինքնավստահ քա- ղովորով և ուխտավորի ջերմեռանդությամբ լիքերկրագեղով խաչերին ու խաչվառներին, ապապանակ Ուխտին և այլ սրբություններին, որոնք անում է դեպի Իր Դահլը, զուրկ տալով խորհրդի հոգևոր պետերին, մինչ հնչում են վա- ղականների երգն ու շարականը մեղմ, օրո- լանուն, օրվա խորհրդով օծուն և թրթռուն: Երբ արարի արհեստական թեմֆիլսոփ, որը խաժամանակ պատրիարքական փոխանորդ հանուն Կայսրի ողջունում է բոլորին և անորհավորում օրվա տոնը:

Կայսրի մասնավոր հրավերով, օրվա տոնի հանդիսության առիթով, պաշտոնական խոսքը տրվում է Ամենայն Հայոց Վեհափառ խորհրդապետին:


«Ձերդ Կայսերական Մեծություն, սիրելի՛ խորհրդապետներ և հավատացյալ ժողովուրդ:

Իբրև Ամենայն Հայոց Հայրապետ, Մենք ապագա Հայաստանեն և հայ ժողովուրդի հա- յալատի կեդրոն Ս. Էջմիածնեն, ձեզի բերելու ջրղը՝ այն և աստվածային օրհնություն, այս փառավոր հանդիսության առթիվ:

Այն տեսարանը, որ կպարզվի այս պահուս մեր աչքին առջև, հրաշալի է, գուցե Մեր ժողովրդի ամենափառավոր տեսարանը, որուն առաջ կգտնվին և գոր երբեք պիտի չմոռ- նանք: Ահա այստեղ բազմած է սրբավիտ թագուստավառ Կայսրը, շրջապատված իր կա- ղականական ընտանիքով, իր նախարարներով: Այստեղ է սրբավիտ Եկեղեցին, իր համայն ապաստանող ժողովուրդը հարյուր հազար- աններով, այստեղ են մեր բույր եկեղեցիներու մրցեղեր իրենց շխմբով, երկինքը պայծառ և արևը կշողա բոլորիս վրա՝ լույս և ջերմու- չություն սփռելով և երկնքի անհասանելի բար- ձունքներեն անշուշտ աստվածային օրհնու- չությունն է, որ կիջնե կենարար, Ձերդ Վեհա- փառության և այս փրատաստեր և հավա- տացյալ ժողովուրդին վրա:

Մեր աղոթքն է, որ Ձերդ Վեհափառություն- ձեր միշտ այսպես խաղաղության, բարօրու- չության և երջանկության մեջ պանե, պահպանե ապա սփանչելի երկիրը:

Այս պահուս, Մենք հուզումով կհիշենք ապացյալ այն օրերը, երբ երկրորդ համաշխար- ան հային պատերազմի նախօրյակին, այս եր- լիկիր առաջին զոհը դարձավ գաղութարարու- չության ֆաշիստական հարձակումին և տարի- ներ շարունակ տառապեցավ: Սակայն, Աստ-



Եթովպական խաչեր և խաչվառներ

ված արդարությունը բրավ և փշրվեցան ֆա- շիզմի ուժերը և Հայլե Սելասիե Կայսրը, իր հուժկու ձեռքով, իր ազատագրած մայր հո- ղին վրա նորեն բարձրացուց ազգային ան- կախության դրոշակը:

Թող այլևս աշխարհի վրա երբեք պատե- րագմեն չլլան, ոչ մեկ տեղ, և խաղաղու- րությունն ու արդարությունը թող թագավորեն հավիտյան:

Հատկապես մենք՝ հոգևորականներս, պետք է աղոթենք խաղաղության և ժողո- վուրդներու եղբայրության համար: Ընդդի- մա նալ պատերազմին կը շա նա կե և պատակիլ Աստուծո կամփին:

Կեցցե՛ նորին Վեհափառություն Հայլե Սե- լասիե Կայսրը:

Կեցցե՛ սրբավիտ և իր հավատացյալ ժո- ղովուրդը:

Կեցցե՛ն մեր բույր եկեղեցիցները:

Կեցցե՛ն ժողովուրդներու բարեկամությու- նը և համայն աշխարհի խաղաղությունը»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը ունկնդրվում է մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ:

Նորին Վեհափառություն Կայսրը, Հայոց Հայրապետի խոսքից հետո, իր ջերմ գոհու- նակությունն է հայտնում, մասնավոր կեր- պով շեշտելով, որ «Ձերդ Սրբությունը ասաց ինչ որ էականն էր»:

Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը տե- ղում անգլիերենի էր թարգմանում Տ. Շահե վարդապետ Անեմյանը, իսկ մի ուրիշը՝ ամ- հարերենի:

Արքայական ունկնդրություն

Հունվարի 20-ին, չորեքշաբթի, առավոտ- յան ժամը 10.30-ին, Ամենայն Հայոց Վեհա-

վառ Հայրապետը, Տանն Կիլիկիո շնորհազարդ Կաթողիկոսը և Երուսաղեմի Հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը, «Հորեկյան» պալատում պաշտոնական այցելություն են տալիս Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ին:

Պաշտոնական այս այցելության ընկերակցում էին նաև Ս. Մամբե արքեպիսկոպոս Սիրուեյանը և Ս. Գարեգին եպիսկոպոս Սարգսյանը:

Պալատի դռան առաջ, Կայսրը անձամբ դիմավորում է իր հյուրերին և առաջնորդում գահասարհ, ուր տեղի է ունենում ջերմ ու սրտաբաց զրույց, որին ներկա են լինում վարչապետը, պալատական մինիստրը, առողջապահության մինիստրը, ժողովի գլխավոր ֆարաուլար Արեբե Ռեմտան և այլ պալատականներ:

Հանդիսավոր իրադրության մեջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոսք է առնում, մի անգամ ևս իր շնորհակալությունը հայտնելով արքայական այս ունկնդրության համար և, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Եթովպիայի Խայսրի Կուրծքը զարդարում է Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակոտ շքանշանով, ի մխիթարություն նրա բարեպաշտ սրտի: Կայսրը իր զգացված շնորհակալությունն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ իրեն հանդեպ ցույց տրված ուշադրության և պատվի համար:

Զրույցի ընթացքում Նորին Ս. Օծուրյունը հայտնում է Կայսրին, որ այս տարի լրանում է հայկական մեծ եղեռնի հիսնամյակը և Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, պատրաստվում են նշելու այդ հիշարժան տարեթիվը՝ սուրբ պատարագի մատուցմամբ, աղոթքով և ուխտով, և խնդրում, որ Նորին Վեհափառության ներկայության, կիրակի օրը, հունվարի 24-ին, Ս. Երրորդություն Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվի և հոգեհանգստյան պաշտոն կատարվի ապրիլյան եղեռնի հայ նահատակներին հիշատակին:

Կայսրը իր խորունկ համակրությունն է հայտնում հայ ժողովրդի հանդեպ և անկեղծ վշտակցությունը արևմտահայության նահատակության հիսնամյակի առթիվ և նշում, որ ինքը ժանոթ է այդ մարտիրոսագրության, ավելացնելով, որ հայկական դատը բրիտանական և արդար դատ է միաժամանակ, և սիրով հանձն է առնում կիրակի օրը անձամբ ներկա լինել սուրբ պատարագին իր ավա-



By Command of

The Imperial Majesty Haile Selassie I, Emperor of Ethiopia  
the Minister of the Imperial Court  
has the honour to request the attendance of

His Holiness Vasken I

at London at the Jubilee Palace  
on Saturday, January 16, 1963  
at 1.00 p.m.

In Honour of the Heads of the Oriental Orthodox Churches

Կայսերական ճաշկերույթի հրավիրագիրը

գանիով և իր հարգանքը բերել հայ նահատակների հիշատակին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Տ. խորեն Կաթողիկոսը, ամենապատիվ Եկեղեցի պատրիարքը երախտագիտությամբ և շնորհակալությամբ հրաժեշտ են առնում Կայսրից և վերադառնում պալատ:

Աղդիս-Արեբայի արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համաժողովի փակումը

Հունվարի 21-ին, հինգշաբթի, առավոտյան ժամերին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, պալատի ընդունելության դահլիճում, բարեհաճում է ընդունել մի շարք այցելությունները օտար և հայ պաշտոնական կազմակերպությանց և անձնավորությանց: Ժամը 12-ին, արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի և եկեղեցական պատվիրակությանց պատվին, պալատում տրվում է հրաժեշտի ընդունելություն, շուրջ 700 հոգու մասնակցությամբ:

Ճաշկերույթին, որն անցնում է մտերմ ու ջերմ մթնոլորտում, ներկա են լինում Կայսրը, գահաժառանգը, վարչապետը, բարձրաստիճան հոգևորականներ, նախարարական կազմը, դահլիճի անդամներ, դիվանագիտական մարմնի և մամուլի ներկայացուցիչներ:

Հետմիջօրեի ժամը 5—7-ին, Աֆրիկյան սրահում, գումարվում է ժողովի վերջին նիստը: Ներկա են Կայսրը, հինգ հոգևոր պետեր, պատվիրակությանց անդամները: Ժողովի փակման առիթով ողջույնի խոսքով հանդես են գալիս հինգ հոգևոր պետերը, այն թվում նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ժողովը փակվում է աղոթքով մաղթանքով:

Աղդիս-Արեբայի ժողովը տևում է հունվարի 15—21 օրերը և սպառում օրակարգ

խնդիրները, յուրաքանչյուր օրակարգի կապակցությամբ ընդունելով համապատասխան որոշումներ:

Աղդիս-Արեբայի արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համաժողովի օրակարգում դրվել էին հետևյալ խնդիրները.

1) Եկեղեցին և առդի աշխարհը:

Սույն օրակարգի ենթակետերն էին հետևյալ հարցերը. Եկեղեցին և երիտասարդությունը, առդի մարդու կապը Եկեղեցու կյանքի հետ, ընտանեկան կյանքը և Եկեղեցու դերը, քրիստոնեական դաստիարակություն, վանական կյանքի զարգացում Եկեղեցու ծոցում, Եկեղեցու ղեկավարության մեջ հոգևորականների և աշխարհականների համագործակցությունը, միացյալ եկեղեցական օրացույցի կազմություն:

2) Համագործակցությունը աստվածաբանական հարցերի մեջ:

Այս օրակարգի ենթագլուխներն էին հետևյալ կետերը. հոգևորական նոր սերնդի համատեղ պատրաստության կարելիություն մի ընդհանուր ճամարանում, դասախոսների և ուսանողների փոխանակություն, բոլոր եկեղեցիներում աստվածաբանական ուսմանց համար մի ընդարձակ և ընդհանուր ծրագրի մշակում, աստվածաբանական ուսմանց և ուսումնասիրությանց համար մի ընդհանուր կենտրոնի ստեղծում, համագործակցության գործնական միջոցների որոնում և աստվածաբանական գրականության հրատարակում և փոխանակում:

3) Եկեղեցու ներքին կյանքի գորացում ավետարանչությամբ և առաքելականությամբ:

Օրակարգի այս երրորդ կետի մեջ քննության են առնվել հետևյալ հարցերը. ավետարանչության սկզբունքը և բովանդակությունը, հոգևոր կյանքի զորացում, ավետարանչությունը քրիստոնեական շրջանակների մեջ, ավետարանչության մեթոդները, նոր ավետարանիչների ընտրություն և համապատասխան կրթություն, համաքրիստոնեական մի ընդհանուր միսիոներական ինստիտուտի հիմնում բոլոր եկեղեցիների համար:

4) Հարաբերությունը մյուս քրիստոնյա եկեղեցիների հետ:

Այս գլխի մեջ քննության են առնվել հետևյալ հարցերը. սերտ և գործնական հարաբերություն արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների և Հուլյն Օրթոդոքս Եկեղեցու միջև, հարաբերություն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ բոլոր եկեղեցիների հետ, քրիստոնեական տիեզերական շարժման ուժեղացում:

5) Եկեղեցիների միջև մնայուն հարաբերություններ պահելու համար մի կենտրոնական մարմնի ստեղծում:

6) Խաղաղության և աղաքության դատի հետապնդում եկեղեցիների համագործակցությամբ:

Աղդիս-Արեբայի արևելյան ուղղափառ եկեղեցիների պետերի համաժողովը արտահայտել է իր խորունկ ցանկությունը՝ աշխարհում բոլոր ժողովուրդների և ազգերի կյանքում արդարություն և խաղաղություն հաստատելու մասին:

Համաժողովի օրակարգի այս 6-րդ կետի մասին ընդունվել է հայտարարություն, ըստ որի՝

«Մեր ժամանակներում աշխարհը տևականորեն անհանգստացած է պատերազմի սպառնալիքով և երկյուղով: Ատոմական այս դարում, որն է պատերազմ կարող է հանգել ամբողջ քաղաքակրթության ոչնչացման և մարդկային կյանքի համատարած բնաջնջման: Ամեն կարելին պետք է անել՝ արգելելու նոր պատերազմի սանձազերծումը աշխարհի որևէ մասում:

Սակայն խաղաղությունը պատերազմի բացակայություն չէ միայն: Դա ավելի կյանքի այն կացությունն է, որի մեջ աշխարհի բոլոր ժողովուրդներն ու ազգերը շարժվում են առաջ ներդաշնակության և համագործակցության մեջ, դեպի աշխարհում Աստուծո թափափուրության փորձառությունը: Մարդկային կյանքի մի այսպիսի կացության մեջ անհատների, համայնքների և ազգերի իրավունքները պետք է ճանաչվեն լիակատար կերպով: Բոլոր մարդիկ հավասար են Աստուծո աչքում: Բոլորն էլ որդիներն են Նրկնային մեկ Հոր: Բնության մեջ Աստուծո օրհնությունները մարդկային բոլոր արարածների համար են, առանց ցեղի, կրոնի, գույնի, դասակարգի կամ սեռի խտրության:

Հետևաբար, մարդկային բոլոր արարածները, համայնքները, ժողովուրդները և ազգերը պետք է վարվեն զիտակցության, ազատության, հավասարության և արդարության սկզբունքով: Մեր եկեղեցիները վստահված են, մեր Տիրոջ հնազանդությամբ, աշխատելու բոլորի համար արդարության հաստատման նպատակով: Մենք համագործակցելու ենք մեկը մյուսի հետ և համաշխարհային կազմակերպությունների հետ, որոնք ճգնում են աշխարհում արդարության և խաղաղության հաստատման և մենք հրավիրում ենք աշխարհի բոլոր ժողովուրդներին, ազգերին և պետություններին՝ անելու ևս նույնը: Թո՛ղ Աստված օրհնի և բարգավաճի այս նպատա-

կի համար կատարված բոլոր ձեռքերը, որի կողմից էլ որ կատարվեն»:

Ժողովի փակումից հետո, նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա կայսրը, «Հորեկյան» պալատում, արևելյան ուղղափառ եկեղեցիների հոգևոր պետերին պարգևատրում է եթովպական բարձրագույն շքանշանով՝ Սաբա քաղաքում մեծ խաչով:

Հունվարի 22-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ադդիս-Աբեբայում Սովետական Միության դեսպան Պուտկովին:

Նորին Ս. Օծոթյան ուղեկցում էին իր մնացած շքախմբի անդամները:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Սովետական Միության դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սիրալիք մթնոլորտում:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Դիրե Դավայի հայ գաղութային վարչության նախագահ Ժորժ Մինասյանը:

Ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը, Ս. Տ. Խորեն կաթողիկոսը և ամենապատիվ Ս. Նյիշե սրբազան պատրիարք հայրը, պատվիրակության բոլոր անդամների ընկերակցությամբ, այցելում են Ադդիս-Աբեբայի հայոց ազգային Գեորգով վարժարանը:

Ողջ ուսանողությունը և ուսուցչական կազմը, դպրոցի գլխավոր մուտքի առաջ, անհուն խանդավառությամբ և բացառիկ ջերմությամբ են ընդունում հարգելի հյուրերին և ծափերի ուրախ բացականչությունների ներքո առաջնորդում դպրոցի դահլիճը, ուր տեսուչ Կարապետ Փոլատյանը, հանուն դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և աշակերտության, գեղեցիկ մի ուղեբժով ողջունում է թանկագին այցելուների ներկայությունը:

Այս գործադրության է դրվում աշակերտական ուժերով կազմակերպված գրական-գեղարվեստական մի կոկիկ հայտագիր՝ բազմազան երգերից և արտասանություններից:

Փոքրիկները երգում են, արտասանում, հոգեկան մեծ խանդավառություն պատճառելով բոլոր ներկաներին:

Այնուհետև, աշակերտության ուղղված բովանդակալից և հայրենաշունչ պատգամով, հանդես է գալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, թելադրելով սիրելի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, պահել մեր ազգային ավանդությունները, հայերեն խոսել միշտ, խանդավառվել մեր Մայր Հայրենիքի պայծառ իրականությամբ և լինել հավատարիմ քաղաքացիները այս օրհնյալ և հյուրոնկալ երկրի՝ Եթովպիայի, որը լայնո-

րեն բացել է իր թևերը հայ ժողովրդի պանդուխտ զավակների առաջ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով վերջանում է այս հույժ գեղեցիկ և անմոռանալի հանդիպումը: Վերջում Վեհափառ բոլոր ներկաներին բաժանում է խաչիկներ:

Երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը պալատում ընդունում է եթովպահայ գաղութային ժողովի անդամներին և զրույց ունենում նրանց հետ՝ համայնքի եկեղեցական, ազգային և համայնքային մի շարք կարևոր հարցերի շուրջ:

Զրույցին մասնակցում են նաև Եթովպահայ առաջնորդ Ս. Մամբե արքեպիսկոպոսը և Ադդիս-Աբեբայի հոգևոր հովիվ Ս. Կորյուն վարդապետը:

### Ուխտագնացություն դեպի Եթովպական վանքերը

Ադդիս-Աբեբայի արևելյան ուղղափառ եկեղեցիների համաժողովի փակումից հետո, ծրագրվել էր նաև ուխտագնացություն դեպի եթովպական վանքերն ու սրբատեղիները:

Հունվարի 22-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 9-ին, մայրաքաղաքի Հայլե Սելասիե միջազգային օդանավակայանում, պատրաստ էր արդեն ինքնաթիռը՝ ուխտավորներին տանելու դեպի հեռավոր ուխտագնացություն:

Եկեղեցական այլ պատվիրակությունների հետ, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու, սույն ուխտագնացության մասնակցում էին Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Ս. Զավեն ծայրագույն վարդապետը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիբյանը:

Պատվիրակությունը այցելում է նախ Լալի Բելլա, մայրաքաղաքից 700 կմ. հեռավորության վրա գտնվող սրբավայրը, Վուլո նահանգի Լաստա գավառում, Եթովպիայի հյուսիսային կողմում: Լալի Բելլա անունն է այն բարեպաշտ և սուրբ կայսրի, որը ճգնել, ապրել ու մահացել է այս հողերի վրա և որի անմիջական հսկողության ներքո և մասնակցությամբ ու քաջաբերանքով շինվել է տեղի մեծ եկեղեցին, ժ դարում: Ամբողջ տաճարը ոչ թե «շինված է» կամ «կառուցված», այլ «փորված» ժայռի մեջ, իհարկե, առանց ճարտարապետական մտահղացման: Տաճարը հավասարվել է ժայռաբլուրին, դրսից ոչինչ չի երևում: Տաճարի շուրջ փորվել են 50—60 մետր խորությամբ խրամատներ:

**התקנת מערכת אבטחה**



Տաճարը ոչ աշտարակ ունի, ոչ կաթողիկե, ոչ հսկա մի ժայռաբլուր է, որը մարդկային անբնականաբար աշխատանքով փորված, դարձել է աղոթքի և ուխտի տուն, միաձուլվել է անսովորական:

Պատգամավոր ուխտավորները կատարում են իրենց ուխտը:

Լալի Բելլայի շուրջ կան 10 այլ եկեղեցիներ, սրբավայրեր և ճգնարաններ: Պատգամավորությունը այցելում է բոլոր վանքերն ու վարդապետները:

Երեկոյան, ի պատիվ պատվիրակության անդամների, նահանգի կառավարիչը ընդունվելություն է կազմակերպում:

Եթովպիայի այս գավառում ապրում է մի քանի միլիոն ազգաբնակչություն, որի մի մասնական զբաղմունքը անասնապահությունն է:

Ժողովուրդը բարի է, ազնիվ, բարեպաշտ, արդյունավետ, բարեբաղի է քաղում իր մի պատանու հացը:

Հետաքրքրական են տները՝ հողաշեն, բոլորածեմ, վեղարանման, եղեգնյա, ցեխապատ տանիքներով և առանց լուսամուտի, մարդու հասակ միակ դռնով:

Գյուղացին այստեղ զարթնում է լուսաբացին և տուն է մտնում արևի հետ: Լույս, ճրագ բոլորություն շունեն:

Հունվարի 23-ին, շաբաթ առավոտյան, պատվիրակության անդամները ինքնաթիռով մեկնում են Աքսում, թռչելով Եթովպիայի ամենաբարձր կատարներից Ռաս-Գալանի վրայով, շուրջ 15 000 ոտք բարձրությամբ:

Ինքնաթիռը, ինչպես Լալի Բելլայում, այստեղ ևս իջնում է լեռնալանջի մի դաշտի վրա: Պատվիրակությանը դիմավորում են իշխան Մեկուշա Սիուն և իշխանուհի Աիդան, նահանգապետը, գավառի պետական ու եկեղեցական ներկայացուցիչները:

Պատվիրակությունը առաջնորդվում է Ս. Աստվածածին եկեղեցին, ուր հավաքված բազմահազար հավատացյալներին ողջունում են շատերը, որոնց թվում նաև Ս. Զավեն վարդապետը:

Պատվիրակությունը այցելում է Աքսումի տեսարժան վայրերն ու հնությունները, հուշարձանները, նորակառույց հույակապ Մայր Եկեղեցին:

Աքսումը Եթովպիայի հին մայրաքաղաքն է, Ադդիս-Աբեբայից 1100 մղոն հեռավորության վրա, ուր ապրում է շուրջ մեկ միլիոն ազգաբնակչություն, որի հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և գյուղատնտեսությունը:

Իշխանի և իշխանուհու կողմից, պատվիրակության պատվին տրվում է ճաշկերույթ:

Ժամը 3-ին, պատվիրակությունը հրաժեշտ է առնում և 6-ին ժամանում Ադդիս-Աբեբա, լավագույն և անջնջելի տպավորություններով թե՛ հնադարյան սրբավայրերից, վանքերից և թե՛ գավառի բարի և հյուրընկալ ժողովուրդից:

Հունվարի 23-ին, շաբաթ, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետ բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ: Երեկոյան ժամը 7-ին, Եթովպիայի պատրիարք Նորին Սրբություն Բասիլիոս Բ-ը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու պատվիրակության պատվին, Պատրիարքարանում, կազմակերպում է ողջերթի ընդունելություն, որն անցնում է եղբայրական ջերմ մթնոլորտում:

Ապրիլյան եղեռնի հիսնամյակի առիթով սուրբ պատարագ, քարոզ և հոգեհանգիստ Ս. Երրորդություն Մայր Տաճարում

Հունվարի 24-ին, կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Ս. Երրորդություն եթովպական Մայր Տաճարում, մատուցվում է սուրբ պատարագ՝ հայկական եղեռնի հիսնամյակի տխուր առիթով:

Պատարագում է Տանն Կիլիկիո շնորհազարդ Ս. Ս. Նորեն Ա Կաթողիկոսը:

Հանդիսավոր սուրբ պատարագին ներկա են Կայսրը, գահաժառանգը, վարչապետը, նախարարները, պաշտոնական այլ բարձրաստիճան անձինք, եթովպացի և հայ խուռներամ բազմություն:

Սուրբ պատարագին ներկա են նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Նուսադեմի Հայոց սրբազան պատրիարք հայրը, արևելյան ուղղափառ չորս եկեղեցիների հոգևոր պետերը և եկեղեցական պատվիրակության անդամները:

Սուրբ պատարագի եկամյան երգեցողությունը կատարում է Ադդիս-Աբեբայի հայոց Մուրադյան երգչախումբը, Ներսես Նալբանդյանի ղեկավարությամբ:

Ս. Սեդանին սպասարկում են Ս. Գարեգին և Ս. Սահակ սրբազանները, Ս. Նավադ և Ս. Ներսես վարդապետները:

Սուրբ պատարագը ամենայն հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»-ը: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ոգեշունչ քարոզում է և վերակենդանացնում հիշատակն ու ոգին մեր նահատակների, որոնք ընկան Վասն Յիսուսի և վասն հայրենեաց՝ մղված պատերազմում:

Ձեռքով Կայսերական Մեծություն, սիրելի՛ եղբայրներ Մեր ի Քրիստոս, սիրեցյալ հավատացյալ ժողովուրդ:



Հայ եկեղեցու պատգամավորությունը առաջնորդվում է Եթովպիայի Անծանոթ պինվորի հուշարձանը ծաղկեպսակ դնելու

Աստուծո ռոգումությամբ, հավաքված ենք Ս. Երրորդության նվիրված այս մեծ տաճարին մեջ, մեր աղոթքը երկինք վերառաքելու, վասն խաղաղության հոգվոց մեր երկու միլիոն հայ ֆրիստոնյաներու, որոնք, հիսուն տարիներ առաջ, համաշխարհային առաջին պատերազմին, 1915-ին, նահատակվեցան Արևմտյան Հայաստանի մեջ, սուրբանական Թուրքիո կառավարության ծրագրով ու կազմակերպությամբ: Ամբողջ ժողովուրդ մը, տղամարդիկ և կիներ, ծերեր և երեխաներ տեղահանվեցան, բռնվեցան դեպի Միջագետքի անապատները ու կոտորվեցան զարհուրելի տանջանքներու մեջ: Իրենց հոտին հետ նահատակվեցան նաև շուրջ շուրս հազար հոգևորականներ, ֆահաճաններ, վարդապետներ, եպիսկոպոսներ: Քանդվեցան ու հրկիզվեցան հազարավոր հայաբնակ շեն ֆաղաֆներ և գյուղեր, հնադարյան վանքեր ու եկեղեցիներ, ոչնչացվեցան բազմահազար հին ձեռագրեր, Ս. Գրքեր, եկեղեցական սրբություններ ու արվեստի արժեքներ:

Հայ ժողովուրդը դատապարտված էր մահվան, որովհետև ան կամեցեր էր իր հայրենի

հողին վրա ապրիլ իբրև ֆրիստոնյա ազատագրություն: Մեր ժողովուրդի մոտ երկու միլիոն զավակները զոհվեցան, իսկ վերապրողները, ավելի քան մեկ միլիոն հայեր, կապրին այսօր պանդխտության մեջ, ի սփյուռս աշխարհի ցրված, հյուրընկալ բարեհոգի երկիրներուն մեջ: Բնաջնջումի ողբերգութենեն փրկվեցավ, փա՛նք Տիրոջը, Արևելյան Հայաստանը միայն, որ առաջին համաշխարհային պատերազմին և հաջորդող տարիներուն, ինքնապաշտպանության հերոսական մարտեր մղելով օսմանյան հարձակողական ուժերուն դեմ, կրցավ իր ազգային գոյությունը փրկել և իր ազատությունը նվաճել, և որ այսօր կապրի, կանի ու կգարճանա, ապահովության և խաղաղության պայմաններու մեջ, իր ավելի քան երկու միլիոն բնակչությամբ, իբրև անդամ պետություն Սովետական Հանրապետություններու Միության:

Հայ ժողովուրդը և մանավանդ ի սփյուռս աշխարհի պանդխտ հայերը, իրենց պատմության ամենամեծ այս ողբերգության հիշատակին առջև, կսգան իրենց նահատակ-

ներ և չեն մոռնար երբեք իրենց ավերված երկիրը հայրենական՝ Արևմտյան Հայաստանը, և կապասեն, որ արդարություն ըլլա իրենց և օր մը անոնք բոլոր վերադառնան իրենց ազատագրված Մայր երկիրը:

Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը, ազգային մեծ սուգը իրենց սրտերում մեջ առած, կաղոթեն նաև, որ մարդկային աշխարհը այլևս երբե՛ք պատերազմի կրակ շտեմեն և այլևս երբե՛ք և ո՛չ մեկ տեղ չկրկնվին ցեղասպանության ոգիները:

Մանավանդ մեր օրերում, ատոմային այս դարաշրջանին, մեր բոլորիս սկզբուն պարտքն է աղոթել և գործել խաղաղության համար, զինաթափման համար, ատոմային զենքերու ոչնչացման համար, պետությանց խաղաղ գոյակցության և ժողովուրդներու բարեկամության համար:

Քրիստոսի Ս. եկեղեցին ևս պետք է ունենա վնասական կեցվածք, պետք է ունենա իր բնութիւնը, անշարժ խոսքը, և պետք է հանդես գա իր ոգեկան, բարոյական բովանդակ հոգւոյնով և իր գործելու բոլոր հնարավորութիւններով, որպէսզի սուրբ զգացումներով լուսավորե մարդկային խիղճը և օգնե բոլորին, մանավանդ պետությանց ղեկավարներուն, ի խնդիր խաղաղության նաեւ պարհները գտնելու և ամրապնդելու:

Պետք է վնասական հնչէ Քրիստոսի եկեղեցիին ձայնը հանուն խաղաղության, հանուն ժողովուրդներու ազգային վեհաճառութեան, հանուն ազատության և ընդդէմ պատերազմի:

Ազգերու և պետութիւններու ղեկավարները թող կանգ առնեն պատերազմ շղթայազերծելու մտադրութեանց առջև ու որոնեն խաղաղութեան նաեւ պարհները համբերութեամբ և լավատեսութեամբ, թող դադարեցնեն ամեն տեսակի սպառազինումներ և ատոմային զենքերու փորձարկումներ, և ջանան մեկը մյուսին հասկնալ փոխադարձ գիշումներով, ճշմարտության ու արդարության լույսով, ազգերու ազատ ինքնորոշման իրավունքի նվիրագործումով: Թող ժողովուրդները մոռնան իրարու առանց նախապաշարումներու, թող զիրար ճանչնան ու գնահատեն և օգնեն իրարու այս աշխարհի վրա, որ իր բազում բարիքներով բոլորին կպատկանի հավասարապէս, այս արեւի տակ, որ բոլորը կլուսավորե ու կշերմացնէ հավասարապէս, միևնույն Հայր Աստուծո օրհնութեան ներքեւ, որ բոլորին կրաշխով հավասարապէս:

«Ողորմութիւն և ճշմարտութիւն պահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. 27 11):

Մենք Մեր անհուն երախտագիտութիւնը կհայտնենք Ձերդ Կայսերական Վեհափառութեան, որ բարեհաճեցաք անձամբ մասնակցելու մեր աղոթքին: Մեր եկեղեցւոյ և մեր ժողովուրդի անունով Մեր շնորհակալութիւնը կհայտնենք նաև Ձերդ Վեհափառութեան շնորհակալութեան համար՝ մեր ժողովուրդի տառապանքին և արդար իրավունքներու նկատմամբ:

Կուգեինք նաև Մեր անկեղծ շնորհակալութիւնները հայտնել Մեր եղբայրներուն ի Քրիստոս, արեւելյան ուղղափառ եկեղեցիներու պատրիարհներուն, իրենց եպիսկոպոսներուն և հոգևորական դասուն, որոնք մեզի հետ աղոթեցին այսօր մեր անմահ նահատակներուն համար, քրիստոնեական եղբայրութեան և միասնութեան ոգիով:

Միւս Աստուծո հովան լուսավորե երկնային արքայութեան մեջ հայ ժողովուրդի բոլոր անհատականներու հոգիները և սուրբ պահե անոնց հիշատակը երկրի վրա:

Թող Աստուծո խաղաղութիւնը պարգևե ամբողջ աշխարհին և եղբայրական սիրտ ոգին զորացնէ մարդոց և ազգութիւններու հոգիներուն մեջ:

Թող Աստուծո շնն ու փառավոր պահե, պահպանե երթուղիներ և իր բարեպաշտ ժողովուրդը՝ միշտ խաղաղութեան մեջ:

Թող Աստուծո երջանիկ գահակալութեան երկար տարիներ պարգևե նորին Վեհափառութեան, քրիստոսասէր և հավատաւ պաշտպան Հայր Սեւակին Ա. Կայսեր երթուղի:

«Ողորմութիւն Աստուծոյ և շնորհ և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ: Ամէն»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն բարոյի անգլերէն թարգմանութիւնը տեղում ընթերցում է Տ. Գարեգին եպիսկոպոս Սարգսյանը:

Հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, կատարվում է առաջին պաշտոնական հոգեհանգիստը եթովպական Ս. Երրորդութիւն Մայր Տաճարում, ապրիլյան եղեռնին զոհ զնացած շուրջ երկու միլիոն հայ նահատակների խնկելի հիշատակին նվիրված:

Հոգեհանգստյան արարողութեան ներկա են նաև Կայսր՝ Իր ամբողջ եկեղեցական և աշխարհական շքախմբով, և բոլոր հոգևոր պետերը:

Արարողութեան ավարտին, կազմվում է եկեղեցական թափոք, որը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի, Տ. Եղիշե սրբազան պատրիարքի հոր գլխավորութեամբ և Հայ եկեղեցու պատվի-

րակության անդամների և ժողովրդական խոսնակներում բազմաթիվ, առաջնորդվում է դեպի մոտակա Անծանոթ զինվորի հուշարձանը՝ գեղեցիկ փառավոր մի ծաղկեպսակ Նիկոլայի հերոս և նահատակ զավակների կոթողի վրա՝ «Հանուն Հայաստանայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի»:

Հուշարձանի առաջ կատարվում է հոգեհանգստյան հատուկ կարգ «Վասն համօրէն նահատակաց, որք անկան վասն հայրենեաց, լընթացս երկրորդ համաշխարհային պատերազմին»:

Հուլիս էր պահը, թեղադրական և անմոռանալի, երբ ապրիլյան եղեռնի հիսնամյակի առթիվ Հայաստանայց Առաքելական Եկեղեցին, հայ ժողովուրդը մեծարում և հարգում էին հիշատակը մի այլ ժողովրդի նահատակ զավակների, Նիկոլայի հայրենասերների, որոնցից մեր օրերում միայն թշնամին վատաբար հնձել էր շուրջ 30 000 կյանքեր մայրաքաղաքում, իտալական զբաղման դաժան օրերին:

Նահատակության, տառապանքների մեջ էլ ավելի եղբայրանում են ժողովուրդներն ու եկեղեցիները: Այն ժողովուրդը, որը նահատակներ չունի, չի կարող հասկանալ մի ուրիշ ժողովրդի նահատակության վեհությունն ու խորհուրդը:

Հունվարի 24-ը հայ և եթովպական քույր եկեղեցիների և եղբայրական երկու ժողովուրդների պատմության վրա ավելացրեց բարեկամության, քրիստոնեական եղբայրության փառավոր, անջնջելի մի նոր էջ:

Օրվա մթնոլորտը այնքան ոգեշնչել էր և հուլիս, որ հանդիսություններից հետո Հայ Եկեղեցու պետերի մեջ բնական կերպով զաղափար ծագեց այդ օրն իսկ Ադդիս-Աբեբայից մի կողմ ուղղել համայն հայ ժողովրդին՝ Փոխադարձ համաձայնություններ և հավաքական գործակցության խմբագրվեց այդ կողմ, որը սակայն վերջին պահին հնարավոր չեղավ ստորագրել և հրապարակել, որովհետև Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը համաձայն չեղավ, որ այն ստորագրվի նաև Երուսաղեմի հայոց պատրիարքի կողմից: Կիլիկյան Աթոռի տեսակետն այն էր, որ խմբագրված կոչի տակ պետք է ստորագրեն միայն երկու կաթողիկոսները:

Այս կացության առջև, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Տ. Նիկիտե սրբազան պատրիարք հայրը հարմար չգտան կողմ հրապարակել միայն իրենց ստորագրություններով:

Իբրև պատմական փաստաթուղթ, այժմ հրապարակվում է այդ կոչի բնագիրը:

## «ՄԵՐ ԽՈՍՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ»

Աստուծո ռդմութայամբ, այսօր, Երվակի մայրաքաղաք Ադդիս-Աբեբայի Ս. Երուզուբյուն եկեղեցին մեջ, հայկական սուրբ պատարագ մատուցինք ի միշտակ ապրիլյան եղեռնի մեր սլաշտելի նահատակներուն և հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն կատարեցինք ի խաղաղություն և հերկեային լուսավորություն անոնց արդար հոգիներուն:

Այսօր, մեր աղոթքը հատուկ իմաստ ստացավ և դարձավ մեզի համար խոր մխիթարության աղբյուր, ներկայությամբ Երվակի Օգոստափառ Գահակալ, Նորին Վեհափառություն Հայե Սեյասիե Ա Կայսեր և ներկայությամբ արևելյան ռադափառ եկեղեցիներու պետերուն և իրենց ընկերակցող պատվիրակությանց անդամներուն:

Ներշնչված հոգեկան հաղորդության, աղոթքի և խոկումի այս բացառիկ պահեն, մենք սրտի պարտք կզգանք հետավոր Ափրիկեի այս ամիսին և փրստոսադրոշմ այս մայրաքաղաքին, հայրական սիրո և ողջույնի մեր խոսքը ուղղել համայն հայության և անգամ մը ևս հաղորդակից ընել բոլորն անխտիր մեր հոգեկան հույզերուն և մտածումներուն:

Ահա բացված է 1965-ը, ապրիլյան եղեռնի հիսնամյակի տարին: Քաջ գիտենք, թե ամենուրեք, համազգային տարողությամբ ճիգեր ի գործ կդրվին փառաշուք հանդիսություններով ամբողջ աշխարհի առաջ ոգեկոչելու համար հիշատակը մեր անմահներուն մենելներուն, վառ պահելու անոնց ոգին և ուխտը մեր ազգի նահապետ սերունդի հոգիներուն մեջ և ավետելու նաև ազնիվ հպարտությամբ, թե կանգուն ու կենդանի են հայ ժողովուրդը ու Մայր Հայաստանը, որոնք կշարունակեն իրենց շինարար ու ստեղծագործ կյանքը հաղթական երթով և միասիրտ ու միակամ կրթաբան դեպի հայոց պայծառ ապագան, այն անասանելի հավատով, թե արդարություն պետք է ըլլա նահատակված իրենց եղբայրներուն և բույրերուն, արդարություն պետք է ըլլա հայոց ազգին:

Մենք եղբայրական միասնական ոգիով ջերմապես կբանակմ մեր սրտերը մեր հարազատ զավակներուն, ըսելու համար բոլորին, թե սպասելի է ու անհրաժեշտ այս տարվան համահայկական առաքելությունը կազմակերպել ու հառաջ տանիլ միաբան, համերաշխ գործակցությամբ և ներդաշնակ, նպատակասլաց աշխատանքով, ի խնդիր մեր նահատակներու հիշատակի պանծացման և ի խնդիր հուշակումին ու հետապնդումին հայ ժողովուրդի ազգային արդար իրավունքներուն:



ԳԻՏԱՆԻՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՆԵՐՆԵՐԸ ԵՎ ԴԵՐՆԵՐԸ ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐԸ ԵՎ ԴԵՐՆԵՐԸ ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐԸ

Սիրելի՛ գավակներ մեր, այս տարի, մեր մեծ սուգի ու աղոթքի տարին, պետք է ըլլա մանավանդ համազգային եղբայրության և ուխտի տարի, անձեռնույց և անհամար աշխատանքի տարի բոլորիդ համար: Հետևաբար, միացե՛ք և ֆալցե՛ք առաջ ձեռք-ձեռքի տված ու պիտի տեսնե՛ք, թե հայ եղբայրության սուրբ գագաթներ պիտի ջերմացնեն ու պիտի գործադեն ձեր հոգիները և դուք, առավել գոտեպիւնդ ու լավատես, ամբողջական նվիրումով, պիտի կարողանա՛ք նոր էջ մը արձանագրել մեր ժողովրդի պատմության գրքին մեջ:

Կեցցե՛ք վերածնած հայ ժողովուրդը:

«Ողջ լեռ ու ֆ, գօրացեալ Ս. Հոգեւորական տօրհնեալ ի Տեառն է և ի Մէնջ»:

Ամէն»:

### Հրաժեշտի ընդունելություն

Հունվարի 24-ին, կիրակի, Երեկոյան ժամը 8-ին, Եթովպահայ գաղութային ժողովը, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Ս. Խորեն Ա Կաթողիկոսի, Ս. Նղիշ սրբազան պատրիարքի հոր և պատվիրակության ղեկավար անդամների, կազմակերպել էր հրաժեշտի ընդունելություն «Դրախտ» ճաշարանի շքեղ սրահում:

Ընդունելության ներկա էին ավելի քան 400 հրավիրյալներ:

Սեղանների շուրջ ստեղծվել էր ջերմ, հայրենասիրական մթնոլորտ: Որոշյալ ժամին սրահ էին ժամանում թանկագին հյուրերը, բոլոր ներկաների ծափերի, ժպիտների և սիրալիր հարգանքի արտահայտությունների մեջ:

Սեղանը օրհնում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Գաղութահայ ժողովի ատենապետ Ս. Պեհեսնիլյանը, հանուն հայ համայնքի, ջերմորեն ողջունում է թանկագին հյուրերի ցանկալի ներկայությունը, որդիական խորունկ երախտագիտություն և շնորհակալություն հայտնում այս պատմական շնորհաբեր հովապետական այցելության համար:

Այնուհետև, ընդհանուր խանդավառության մեջ, խոսք է անոում Նուսադեմի ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը:

«Արտասահմանի կղզեխումբը, արտասահմանի արշիպելագոսը, կազմված հայ գաղութներեն, անտարակույս որ չի կրնար իր գոյատևման իրավունքը պահպանել, եթե չունենար իր գաղափարականները, եթե չունենա իր «սեմբուլ»-ները, ինչպես կըսվի: Եվ հայ ժողովուրդը դարերով երկու գաղափարականներ ունեցած է՝ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին:

Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին երկու թևեր եղած են, որ միշտ կարկառված են, միշտ բացված են իրենց զավակներուն և հարազատներուն, կազմելու համար հայ սիրտը, կազմելու համար հայ գիրկը: Առանց այդ երկու սուրբերուն, առանց այդ երկու ուժերուն, հազիվ թե արտասահմանի ժողովուրդը, արտասահմանի հայությունը կարենա ինքզինքը փրկել, կարենա ինքզինքը իբրև հայ պահել: Արտասահմանը չունի իր դերը, արտասահմանը ունի իր պահպանակները և այդ երկու պահպանակներեն մին մեր քաղաքականությունն է և մյուսը՝ մեր տնտեսական ուժը. և սակայն դժբախտաբար այդ երկու ուժերը, որոնք մենք կկարծենք, թե ուժեր կրնան ըլլալ մեր գոյատևման, այդ երկու ուժերը այսօր վերածված են մեզի դեպի ծուլում և դեպի ապագայանցում առաջնորդող ճամբաներ:

Մեր տնտեսությունը, որ արտասահմանի մեջ կկարծենք մեզի համար միակ ապահովությունը, ժանգոտած պատյան մըն է, որուն մեջ կփախ մեր հայ հոգին, մեր հայ սրբությունը: Հայ ժողովուրդը կըսե՛ «Մուռ նստինք, շիտակ խոսինք», և ասիկա իրողություն է. այսօր մեր հարուստներեն շատերը, այսօր մեր բազմաթիվ դրամատերերը կամաց-կամաց իրենք են, որ կուծանան մեր ժողովուրդեն, իրենք են, որ կհեռանան մեր ժողովուրդեն, և տնտեսական ուժը, որ ուրիշ ժողովուրդներու համար, ուրիշ պետություններու համար ուժ մըն է իրապես, մեզի համար կարծես ուժացման և կորստյան ճամբա մըն է:

Բարձր դիրքերու վրա գտնվելու իդեալը ուրիշ ուժացման ճամբա մըն է արտասահմանի մեր ժողովուրդին համար, որովհետև անոնք, որ որոշ դիրքերու և որոշ զարգացումի կհասնին, անոնցմե շատերն ալ կամաց-կամաց կհեռանան իրենց մայր զանգվածեն, կօտարանան և կդադրին նաև մեզի մաս կազմելու: Միակ փրկությունը մեր ժողովուրդին, միակ պատգամը, որ կրնա գալ մեր ժողովուրդին, կուգա միայն Մայր Հայրենիքեն և կուգա Ս. Էջմիածին: Տակավին տարիներ առաջ մեզի բախտակից ուրիշ ժողովուրդ մը՝ հրեա ժողովուրդը, երբոր իր հայրենիքը կհավաքվեր, սիոնիստները դիտողություն կընեին օրվան նախագահին, ըսելով, թե ի՞նչ պետք կար, որ հրեաները Հրեաստան հավաքվեին, երբ բոլոր երկիրներու մեջ հրեությունը պետության մեջ պետություն էր: Այդ ժամանակվան իրենց նախագահը և առաջնորդը ըսավ. «Մշակույթները կստեղծ-



Վեհափառ Հայրապետը Ադդիս-Աբեբայի Ռայոց ազգային Գևորգով վարժարանում

վին միայն ու միայն մայր հայրենիքին մեջ. հոգին կատեղծվի ու կթաքնվի միայն ու միայն մեր սրբազան գերեզմաններում վրա, մեր սրբազան գերեզմաններում մոտիկը: Ժողովուրդ մը, որ շունի հայրենիքի գաղափարը և շունի իր սրբությունն սրբոցը, իր եկեղեցին, իր հավատքին ու ժեղացած մարմինը, մեր պարագային Ս. Էջմիածինը, այդ ժողովուրդը աշխարհի ամենամեծ ուժերն ալ ունենա, կղադրի ժողովուրդը ըլլալն, կղադրի իր ցեղին, իր անցյալին պատկանելն:

«Սեմբուր»-ները և գաղափարականները չեն շինվիր. անոնք մեր անցյալին, անոնք մեր դործունեության, անոնք մեր գերագույն ըզձանքներուն, երազներուն ու իդեալներուն, անոնք մեր հպարտության զգացումներն են. անոնց հետ կարելի չէ խաղալ և միայն պակասավոր հոգիներն են, որ շունին այդ զգացումները և շունին այդ սրբությունները:

Մենք մեր մեջ այսօր ունինք մեր հայրենի սրբություններու, մեր հայրենի գաղափարին, ինչպես նաև մեր Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնին ներկայացուցիչը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգեն Վեհափառը, Կաթողիկոս

Ամենայն Հայոց: Եթովպահայ գաղութը բախտավոր է, ինչպես ըսվեցավ, երջանիկ է, որ իր մեջ ունի Նորին Ս. Օծությունը և Նորին Ս. Օծության նման անձնավորություններ, որոնք կուգան և կայցելեն մեր հոտին և կգտնվին գաղութներու մեջ, առիթ կըլլան ոչ միայն համախմբումներու, բայց մանավանդ առիթ կըլլան, որ մեր հոգին անգամ մը ևս դիմավորեն այն, ինչ որ մեր գերագույն իդեան է, այն, որ մեր ամեն բանն վեր է, այն, իսկանց որուն մենք կղադրինք ոչ միայն հայ ըլլալն, այլ նաև կղադրինք մարդ ըլլալն, որովհետև ով որ իր ազգին չի պատկանիր, ոչ մեկ բանի կրնա պատկանիլ, ով որ իր ազգին չի ծառայեր, ոչ մեկ բանի կրնա ծառայել, ով որ իր ազգին ու եկեղեցիին իդեալներով չէ տաքցած և չէ խրախուսված, ոչ մեկ ուրիշ բանով կրնա տաքնալ և խրախուսվիլ:

Այսօր մեր մեջ ունինք նաև Նորին Ս. Օծություն հորեն Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո: Կիլիկիո Կաթողիկոսությունը, Անթիլիասը, տակավին մինչև երեկ աղոտ պատուհան մըն էր հայ մարմինին, արտասահմանի հայ հոգիին վրա բացված, և սակայն, շնոր-

իմ նախախնամական կարգադրություններն ունենալու և շնորհիվ հայ ժողովուրդին և շնորհիվ մասնազան օժանդակություններուն, այսօր Վեհաժողովի սահմանադրական Կիլիկիո Կաթողիկոսությունը շարունակում է բացված արտասահմանի վրա և աշխարհային այդ սիրելի աշխարհում, եթե իր լույսը չառնե Մայր Հայրենիքին, եթե իր լույսը չառնե էջմիածնին, եթե իր լույսը չառնե իր հոգևոր զորացնե մեր դարավոր սրբություններն ունենալով, այդ աշխարհում կրնա ինքզինքը միայն շոշափվել, այդ աշխարհում կրնա միայն խաբխափել: Ենթադրելով, որ մեր ժողովուրդի սրբություններուն լիակատար ցուցանիսները՝ ձեր սիրելի երկու կաթողիկոսները քով-քովի նստած, իրարու օգնելու և իրենց աշխատելով իրարու կիտխանալու և ինչ որ մեզի համար դերագրված զորականություն է, այն, ինչ որ մեզի համար համարված է:

Բոլորս միասին մեր սրտի խորերեն, հատուկ մեր Եկեղեցիին և հանուն մեր հայրենիքին, այսինքն մեր ժողովուրդի սրբություններուն, ի սրտե մաղթենք, որ մեր սիրելի հայրապետները միշտ սիրտ-սրտի ըլլան, միշտ աշխարհի նային և միշտ ձեռք-ձեռքի նստաշնորհեն մեր արտասահմանը:

Ես կբարձրացնեմ բաժակս և կուզեմ, որ ժողովուրդ միասին բարձրացնեք ձեր բաժակները մեր և ձեր շատ սիրելի երկու հայրապետներուն կենացը:

Կեցցեն մեր հայրապետները:

Ապա ողջույնի և շնորհակալության ջերմ անուրջ է ասում Ս. Տ. Խորեն Ա Վեհափառ Կաթողիկոսը, որն անդրադառնում է Ադդիս-Աբեբայի ժողովին, օրհնում է եթովպահայ ազգությունը իր ցույց տված սրտագին ընդունակության համար և հույս ունենալով, որ միասնական ոգով ապրիլյան եղեռնի հիշատակը նշելու մասին:

Ոտքի վրա է Ամենայն Հայոց Հայրապետը: Մա խոսում է հուզված, այրող, կրակե արարող կա նրա աչքերում՝ իր պանդուխտ զավակների ճակատագրի և վաղվա գալիք օրերի անակնկալների համար: Խոսում է Հայոց Հայրապետը, կոչ է անում պահել մեր հոգևոր և բարոյական միասնությունը, կենդանի և ամուր պահպանել կապերը Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր նվիրապետական Աթոռների, թեմերի միջև, բոլորվել Եկեղեցու և դպրոցի շուրջ, լինել հավատարիմ քաղաքացիները եթովպական այս օրհնյալ հողի, ուր մեր ժողովուրդի մնացորդացի մի թանկագին մասը ապրում է և ստեղծում:

Այնուհետև Հայոց Հայրապետը իր գոհունակությունն է հայտնում եթովպահայ ողջ

համայնքին, Ս. Մամբրե արքեպիսկոպոսին, հոգևոր հովիվին, զաղութահայ ժողովին, կաթողիկոսություններին՝ ջերմ հյուրասիրության և որդիական ուշադրության համար, և օրհնում բոլորին:

Հայոց Հայրապետը իր մասնավոր երախտագիտությունն է հայտնում Եթովպիայի Կայսր Նորին Վեհափառություն Հայր Սեփյան Ա-ին, եթովպական բարեխնամ կառավարության, եթովպական քույր եկեղեցուն՝ Իրեն և Հայաստանյայց Եկեղեցու պատգամավորության հանդեպ ցույց տրված բարյացակամ ուշադրության, հոգածության, հյուրասիրության և ընծայված հարգանքի համար:

Ընդունելության վերջում, Վեհափառ Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ականակուռ շքանշանով զարդարում է կուրծքերը եկեղեցական խորհրդի վաստակավոր նախկին անդամ Կարալիս Էյեյանի և զաղութային ժողովի ատենապետ Սամվել Պեհես-ճիլյանի՝ նրանց ազգագույն և եկեղեցական բարի ծառայությունների համար:

Հրաժեշտի ընդունելությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

#### Վերջին օրերը Ադդիս-Աբեբայում

Հունվարի 25-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 9-ին, մեկնում են Ադդիս-Աբեբայի արևելյան ուղղափառ եկեղեցիների հոգևոր պետերի համագումարին մասնակցող ասորի և հնդկ մալաբար եկեղեցիների հոգևոր պետերն ու նրանց պատվիրակությանը անդամները:

Նույն ինքնաթիռով Կահիրե է մեկնում նաև Տանն Կիլիկիո շնորհազարդ Ս. Տ. Խորեն Ա Կաթողիկոսը իր շքախմբով:

Հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Ս. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին ճանապարհում են Նուսադեմի ամենապատիվ Ս. Եղիշե սրբազան պատրիարք հայրը և Ս. Կոմիտաս եպիսկոպոսը:

Երեկոյան ժամը 5.30-ին, Լույ Մաքոնեն պալատում, Նորին Վեհափառություն Հայր Սեփյան Ա Կայսրը հրաժեշտի վերջին այցելությունն է տալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Նորին Սուրբ Օծության և Կայսրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, մտերմիկ մթնոլորտում: Այս առթիվ, Կայսրը Հայոց Հայրապետին է հանձնում մի շարք թանկագին նվերներ որպես հիշատակ, անձամբ Կայսրից և Եթովպիայից:

Հունվարի 26-ին, երեքշաբթի, առավոտյան ժամերին, Վեհափառ Հայրապետը Լու Մաբունեն պալատում, բարեհաճում է ընդունել մի շարք պաշտոնական և անհատական այցելություններ:

Ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ և սրբազան պատրիարք հոր մասնակցությամբ, գումարվում է Եթովպահայ գաղութային ժողովի նիստը, որտեղ որոշվում է Երուսաղեմի Ս. Հարություն Տաճարի նորոգության առիթով Ադդիս-Աբեբայում ևս հանգանակություն կատարել:

#### Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ադդիս-Աբեբայից

Հունվարի 27-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 9-ին, տասներկու օր իր օրհնաբեր ներկայությամբ և հովվապետական այցելությամբ եթովպահայ հայ համայնքը, եկեղեցական-ազգային և հոգեկան բացառիկ մթնոլորտի մեջ ապրեցնելուց հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ադդիս-Աբեբայից և մեկնում Կահիրե, իր շքախմբով:

Նորին Ս. Օծությունը պաշտոնապես և հանդիսավորությամբ առաջնորդվում է Ադդիս-Աբեբայի օդանավակայանը:

Նույն ինքնաթիռով Կահիրե է մեկնում նաև Ղայտի քույր Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Նորին Սրբություն Աբունա Կիրիլոս Զ Պատրիարքի:

Երկու քույր եկեղեցիների հոգևոր պետերին անձամբ ճանապարհում է Կայսրը:

Քանկագին հոգևոր հյուրերին ճանապարհում են նաև գաղափառագր, վարչապետը, նախարարներ, Եթովպական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականությունը, դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը, Ս. Կուրյուն և Ս. Շահե վարդապետները, Գաղութային ժողովի անդամներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, դպրոցի դասախոսական կազմն ու աշակերտությունը և ողջ հայ համայնքը:

Վերջին ըոպեններն են:

Պահը հուզիչ է, խռովիչ և անմոռանալի: Արցունք կա բոլորի աչքերում: Ժողովուրդը վերջին անգամ պատեհություն է ունենում խոնարհաբար մոտենալու Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Հայրապետին և ստանալու Նրա վերջին օրհնությունը:

«Երթալք բարյա՛վ, սիրելի՛ Հայրապետ, մեր աչքերը տարեք Ձեզի հետ»:

«Մենացեղ խաղաղության», — հուզումից զողացող ձայնով ասում է Վեհափառ Հայրապետը և օրհնում բոլորին:

Մեկնումի վերջին ըոպեն է:

Կայսրը, Բեանցուկ արած Հայոց Հայրապետին և Կիրիլոս զպտի Պատրիարքին, առաջանում է դեպի ինքնաթիռը, շրջապատված իր շքախմբով:

Աջահամբույր, վերջին գրկախառնումներից հետո, Կայսրը վերջին ըոպենի ավետում է Հայոց Հայրապետին. «Հայ համայնքի և Եկեղեցու մասին Ձեր հուշագիրը ստացած եմ և կարգադրած Ձեր երեք հարցերն էլ. բարի ճանապարհ»:

Հայոց Հայրապետը վերջին անգամ երախտագիտությամբ սեղմում է Կայսրի երկարատև բարի ձեռքը, հրաժեշտ է առնում բոլոր ներկաներից և բարձրանում ինքնաթիռ, ժողովուրդի հուզիչ արտահայտությունների մեջ — Բարի ճանապարհ, սիրելի՛ Հայրապետ:

Բոլոր ներկաների շրթունքներից արձակվում են սիրտ, երախտագիտության և հարգանքի բառեր:

Ծափերի և բարեմաղթությունների ներքո ինքնաթիռը բարձրանում է երկինք և ուղղություն վերցնում դեպի Կահիրե:

#### Վեհափառ Հայրապետը կրկին Կահիրեում

Հունվարի 27-ին, չորեքշաբթի, հետմիջօրի ժամը 1-ին, եթովպական ինքնաթիռով Վայրէջք է կատարում Կահիրեի միջազգային օդանավակայանում: Եգիպտահայ գաղութը ազգային-եկեղեցական բոլոր կազմակերպություններն ու հատվածները ներկայացնող մեծ հոծ բազմություն, անձկագին ու երկյուղածորեն, սպասում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանման:

Ինքնաթիռի կամրջակի վրա Վեհափառ Հայրապետի երևումը դիմավորվում է բուռն ծափերով: Նորին Ս. Օծությունը օրհնում բոլոր ներկաներին և ժողովրդական թափուրով առաջնորդվում դահլիճ, ուր ընդունում է եկեղեցական, ազգային մարմինների ներկայացուցիչներին, շնորհակալություն հայտնում ջերմ դիմավորության համար և հանդիսությամբ մեկնում նախարարաց պալատ՝ ստորագրելու հյուրերի մատյանում:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջ նորդվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի ուր ևս ժողովրդական խանդավառ բազմությունը անձկանոք սպասում էր Վեհափառ Հայրապետի ժամանմանը:

Հուզման, ուրախության և ոգևորության մթնոլորտում Հայոց Հայրապետը եկեղեցա-

լան թափորով և «Հրաշափառ»-ով մուտք է  
տործում եկեղեցի:

«Քե պարծի այսօր Ս. Եկեղեցի» և ուրախ  
է ժողովուրդն հայոց, ո՛վ աստուածարյալ  
Պահակալ Ս. Լուսաուրջի գահի:

Եզրպտահայոց առաջնորդ Ս. Մամբե  
աւրբեպիսկոպոսը, հանուն թեմի, ողջունում է  
Վեհափառ Հայրապետի կրկին այցելութիւնը  
Կահիրե:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է  
զարբազան հոր գալստյան և ողջույնի խոսքե-  
րին:

«Սիրելի՛ ժողովուրդ, նաեւ պարհները գՄեզ  
վերստին ձեզի բերին և Մենք ուրախ ենք  
ապրող համար: Դուք մեր այսօրվան արտա-  
սանձանի ժողովուրդին լավագույն մեկ մասը  
կհանդիսանաք, իբրեւ կազմակերպված եկե-  
ղեցական, ազգային համայնք: Եվ միշտ ան-  
շուշտ Մեզի համար միաբարական է գտնվիլ  
ձեր մեջ, մանավանդ որ հետզհետե Մենք  
ավելի սուրվեցանք ձեզ մոտեն նանչնալ և  
սիրել:

Մասնավոր հանույք կպատնառն Մեզի նաև  
գտնվիլ այս տանարի կամարներուն տակ:  
Այս լայն բացվող կամարները, մեր սրտերն  
ալ լայնորեն կբանան և այնտեղ հետզհետե  
կծաղկին ազնիվ զգացումներ, բարի զգա-  
ցումներ: Մեր ապրումները, մեր լավագույն  
հույզերը դեպի մակերեսը կուզան մեր հո-  
գիներու խորքն, և անա մենք հետևաբար  
կդառնանք ավելի հաղորդակից աստվածա-  
յին շնորհներուն և կմոտենանք այն օրհնու-  
թյան, որ կակնկալենք, որ այս սուր սեղան-  
ներեն մեզի կբաշխվի:

Այսպիսի հոգեկան ապրումներով է, որ  
անա վերստին կհանդիպինք ձեզի, սիրելի՛  
հավատացյալ զավակներ Մեր: Դուք գիտեք,  
որ կվերադառնանք Երուսաղիմ մայրաքաղա-  
քն, ուր հրավիրված էինք այն ժողովին,  
որուն նախաձեռնությունը ստանձնած էր և  
հրավերներ ուղղած օգոստոսիա խաչար  
Երուսաղիմ: Այսօր, աշխարհի եկեղեցիները  
բոլոր, ավելի կենդանի գործունեություն մը  
կծավալեն, մեկը մյուսին մոտենալու, մեկը  
մյուսը նանչնալու և բոլորը միասին առավել  
իրականացնելու հոգևոր այն միությունը,  
որուն մասին Ինքը մեր Տերը Հիսուս խոսե-  
ցավ: Քրիստոնեությունը ինքը, իր էությանմբ,  
իր հիմնական առաքելությամբ, անշուշտ որ  
սիրո, միության, խաղաղության առաքելու-  
թյուն մըն է մարդկային աշխարհին մեջ:

Թե ինչո՞ւ համար սակայն այս առաքելու-  
թյունը քրիստոնեությունը չկրցավ մինչև հի-  
մա ամբողջապես իրականացնել երկրի վրա,  
այդ ուրիշ հարց է, որուն պատասխանելու  
համար պետք է պատմությունը բնել այդ եր-

կու հազար տարիներուն: Այսօր, եկեղեցիներ-  
ը գերագույն ճիգեր ի գործ կդնեն, որպեսզի  
մոտենան զանե այդ իդեալներուն իրակա-  
նացման, այսինքն բարեկամության, եղբայ-  
րության, խաղաղության և փոխադարձ  
փոխմթերման: Եկեղեցին անշուշտ որ իր  
բնեյի խոսքը ունի և պետք է ունենա: Եվ  
այդ խոսքը բնելու համար, բնական է, որ  
իրենք, քրիստոնեական եկեղեցիները, առա-  
ջին օրինակը պետք է տան փոխադարձ հաս-  
կացողության, սիրո և համեմաշխ գործակ-  
ցության, ի խնդիր կենսագործման, աշխար-  
հի վրա և կյանքի մեջ, ավետարանական  
նշմարտություններուն և պատգամներուն:

Կխորհինք, թե Երուսաղիմ կայսր այս նպա-  
տակով է, որ նախաձեռնությունը ստանձնեց  
հրավիրելու արևելյան հին հինգ եկեղեցի-  
ները, իրենց պետերով:

Աղդիս-Արբեա հավաքված էին պետերը  
այդ հինգ եկեղեցիներու, ուրեմն մեր Եկե-  
ղեցին, Երուսաղիմի եկեղեցին, Ասորի Եկե-  
ղեցին, Ղպտի Եկեղեցին և Հնդկ Մալա-  
բարներուն եկեղեցին, որոնք կնկատվին  
դավանակից եկեղեցիներ, որոնք կգտնվին  
երեք տիեզերական ժողովները բնդունող ե-  
կեղեցիներու դիրքերու վրա:

Հազար և հինգ հարյուր տարի ի վեր, այս  
հինգ եկեղեցիները չէ եղած, որ իրենց գերա-  
գույն պետերով ու ներկայացուցիչներով,  
իրարու դուր հավաքված ըլլային, մեկը մյու-  
սին ավելի լավ նանչնալու և միասին աղօթե-  
լու և գործելու համար:

Անա այդ է, որ իրականացավ այս ժողո-  
վով: Այս հանդիպումը, հետևաբար, իրոք որ  
պատմական երևույթ է մեր օրերուն մեջ:  
Դրական երևույթ պետք է նկատել այդ և  
պետք է հույս հայտնել, որ հետզհետե այս  
հինգ եկեղեցիները պիտի կարողանան միաս-  
նաբար որոշ կեցվածք մը ունենալ աշխարհի  
հանդեպ, մանավանդ եկեղեցական կյանքի  
մեջ: Այս հինգ եկեղեցիները միասնաբար,  
հավանաբար պիտի կարողանան իրենց խոս-  
քը բնել բոլոր այն հարցերուն նկատմամբ,  
որոնք կհուզեն զմեզ բոլորս, առաջին հեր-  
թին մեր եկեղեցիները, բայց նաև իրենց  
խոսքը բնելու այն հարցերուն վերաբերյալ,  
որոնք կհուզեն այսօր ամբողջ աշխարհը,  
համայն մարդկությունը:

Քննականաբար այս առաջին ժողովին հնա-  
րավոր չէր կրնար ըլլալ քննարկել բոլոր հար-  
ցերը, որոնք մեր առջև կընային դրվիլ,  
հնարավոր չէր կրնար ըլլալ անոնց լուծումը  
սպասել և մանավանդ հնարավոր չէր կրնար  
ըլլալ գործունեության ամբողջական ծրագիր  
մը մշակել, սակայն կխորհինք, թե այս բո-  
լորը քայլ առ քայլ է, որ պիտի կարողանանք

իրականացնել: Այս առաջին ժողովը եղավ հանդիպում մը, փոխադարձ ճանաչում մը և ստեղծվեցավ համագործակցության և սիրո մթնոլորտ մը, այս հինգ հեագույն բոխտունեական եկեղեցիներուն միջև:

Մենք ուրախ ենք, որ այս առիթով, առաջին անգամ ըլլալով, հանդիպեցանք մեր բոլոր եկեղեցիներու պետերուն անձնապես, և այս կերպով, իրար ավելի լավ ճանչցանք. և երբ մարդիկ կսկսին զիրար ավելի մոտիկեն՝ ճանչնալ, կսկսին նաև զիրար սիրել անշուշտ:

Եվ այդ ալ նկատենք դրական արդյունք մը այս հանդիպումին: Ու անշուշտ մասնավոր ուրախությամբ պետք է հիշենք այստեղ Մեր հանդիպումը Մեծի Տանն Կիլիկիոյ Շեռհա-գարդ Խորեն Կաթողիկոսին հետ, որուն վերջին անգամ հանդիպած էինք, ինչպես գիտեք, տարի մը առաջ Նոստաղեմի մեջ: Այս անգամ Մենք ավելի երկար ժամանակ ունեցանք միաստեղ ըլլալու և մեկ հարկի տակ բնակելու: Այդ ևս կնկատենք Մենք ժողովի բարեբար արդյունքներն մեկը, Մեզի համար, Հայ եկեղեցիին համար, և մեր Աթոռներու փոխհարաբերությանց համար:

Թեև ճիշտ է, հարցեր կան, որոնք անելոյծ կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Տանն Կիլիկիոյ Աթոռներուն միջև, և չենք գիտեր, թե այդ հարցերը ե՛րբ պիտի լուծվեն օրինակաւորության և միասնության գոգով:

Կրկին Մենք Մեր շեմ ուրախությամբ կհայտնենք, որ ձեզի հանդիպեցանք: Կաղոթենք առ Աստված, որպէսզի այս սուրբ տաճար միշտ այսպէս կանգուն, հաստատ, պայծառ, լուսավոր մնա և իր հովանիին տակ հավաքե համայն եգիպտահայ մեր հավատացյալ ժողովուրդը, հոգեւոր ուժ և սնունդ և շնորհներ բաշխելով իր Ս. Սեղանեն մեր բոլոր հավատավոր զավակներուն:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և յապետեան»:

Ամէն:

Եկեղեցական արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը նույնպիսի հանդիսութեամբ և ոգևորիչ մթնոլորտի մեջ առաջնորդվում է առաջնորդարան, որտեղ Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ Տ. Զավեն վարդապետը, հանուն ազգային-եկեղեցական իշխանութեան, վերստին ողջունում է Նորին Ս. Օծուխյան ներկայութիւնը:

Հանդիսութիւնը փակվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և աջահամբույրով: Ապա Նորին Ս. Օծուխյանը արաջնորդվում է «Սեմիրամիա» հյուրանոցը:

## Տեսակցութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ

Հունվարի 28-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի իր հարկաբաժնում, ընդունում է միջադր Կաթողիկոսական այցելութիւններ, այդ թվում «Արև» օրաթերթի խմբագիր Էդմոնդ Կոտալազյանին:

Նորին Ս. Օծուխյանը տեսակցութեան ընթացքում բարեհաճում է պատասխանել հարգելի խմբագրի հետևյալ հարցերին.

Հարցում— Ի՞նչ նպատակներով և ի՞նչ արդյունքներով գումարվեցավ Ադրիս-Արեբայի հինգ արևելյան եկեղեցիներու ժողովը:

Պատասխան— Ուղղափառ հինգ հին եկեղեցիներու այս ժողովը հրավիրվեցավ Եթովպիոյ Կայսեր կողմէ, նպատակ ունենալով առաջին հանդիպում մը կազմակերպել այդ եկեղեցիներու պետերուն միջև:

Թեև այս հինգ եկեղեցիներս դավանակից բոլոր եկեղեցիներ կնկատենք մենք զմեզ, սակայն, պատմական պարագաներու բերումով, 1 500 տարիներն ի վեր, չէ եղած առիթ և հնարավորութիւն, որ այս եկեղեցիները, իրենց պետերով, ժողովի մը նստեին, ժողով մը կազմակերպեին և քննեին զանազան հցեր, որոնք կշահագրգռեն այս դավանա-եկեղեցիները:

Առաջին անգամն է, ուրեմն, որ այսպիսի ժողով մը գումարվեցավ և Մենք կխորհինք, թե հիմնական նպատակը, որ իրականացավ, պետք է նկատել այն, որ այս եկեղեցիներու պետերը հանդիպեցան, ավելի մոտիկեին ճանչցան զիրար, քննարկեցին շարք մը հարցեր, բայց որ ամենն կարեւորն է, գետին պատրաստեցին կամ ճանապարհ մը բացին ապագա առավել փոխադարձ ճանաչման և գործակցութեան:

Ինչ որ կատարվեցավ, Մեր կարծիքով, Ադրիս-Արեբայի մեջ, ապագա գործունեութեան մը սկզբնավորութիւնն է:

Հարցում— Մեր եկեղեցին ի՞նչ տեղ գրավեց այդ ժողովն ներս և ի՞նչ բաժին վերցուց խորհրդակցութեանց ընթացքին:

Պատասխան— Ինչպես ծանոթ է ձեզի Մայր Աթոռի հաղորդագրութիւններին, Հայ եկեղեցին հրավիրված էր մասնակցելու մեկ պատվիրակութեամբ, իր գլուխը ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այդ հավաստիացումով Մենք ճամբա ելանք դեպի Ադրիս-Արեբայ: Եվ սակայն, հակառակ Մեզի եղած հավաստիացումներուն, այնտեղ կացութիւն մը ստեղծվեցավ, որ Մեզի համար բոլորովին անցանկալի էր և կմտածենք, թե

յանակալի չէր նաև Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից համար:

Այս կացությունը Մեր կամքին անկախ և անհրաժեշտ է և որոշ դժվարություններ հասնում են ժողովի աշխատանքներում: Եվ նույնիսկ երկու-երեք օր ժողովը չկրցավ իր աշխատանքներում սկսել, Մեր Եկեղեցվո մասնակցության ձև մը չկրնալ գտնելուն պատճառով: Ի վերջո, Մենք և Մեծի Տանն Կիլիկիո Խորհն Կաթողիկոսը, տեսնելով այս կացությունը, բարվոք համարեցինք շմասնակցել ժողովին, այլ ուղարկել միայն դիտորդներ. այդպես ալ եղավ: Հատուկ հայտարարությամբ մը Մենք հաղորդեցինք ժողովին, որ Հայ Եկեղեցին պիտի չկրնա մասնակցել ժողովին, առանց մասնավոր բացատրություններ տալու: Բայց անշուշտ ժողովը գիտեր թույն պատճառը: Այս կերպով ժողովը իր բնավանդ աշխատանքներում կրցավ սկսել: առանց Մեր մասնակցության: Մենք միայն հանդիսավոր բացման և փակման ներկա եղանք, մասնակցեցանք բոլոր հանդիսություններուն և վերջավորության, մեկնելն առաջ, Մենք Մեր հետ առինք ժողովի որոշումները և այլ փաստաթղթեր, որոնց տակը, անշուշտ, Մենք ստորագրած չէինք:

Այս ձևով և այս պատճառով մենք անմիջական մասնակցություն չբերինք ժողովին, ոչ Մենք և ոչ ալ Խորհն Կաթողիկոսը:

Կիտրհինք, թե այս կերպը, տվյալ պայմաններում մեջ, լավագույն լուծումը եղավ և հույս պետք է հայտնենք, որ ապագային գուցե հնարավորություններ ստեղծվին, որպեսզի հետագա հանդիպումներում մեջ Եկեղեցին մասնակցի օրինակսության և մեր ավանդություններու հիման վրա, այսինքն մեկ և անբաժանելի պատվիրակությամբ մը, գլխավորված Ամենայն Հայոց Հայրապետին կողմի:

Թեև մասնավոր որոշում չէ կայացած հերթական հանդիպումներու շուրջ, բայց պետք է ենթադրել, թե ապագա հանդիպումներ տեղի պիտի ունենան. երբ և ո՞ր՝ այդ մասին կարելի չէ որոշ կարծիք մը հայտնել:

Հարցում— Անշուշտ ժողովին մասնակցելու սկզբունքը պիտի մնա նույնը, այսինքն միացյալ պատվիրակություն՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Պատասխան— Պարզ է, Մենք ուրիշ կերպ չենք կրնար երեկայել, հիմնվելով մեր Եկեղեցվո կանոններուն, ավանդություններուն և մեր ժողովրդական, ազգային հասկացողություններուն վրա: Անշուշտ, սակայն, մասնակցությամբ, այդ պատվիրակության մեջ, մեր նվիրապետական աթոռներուն՝ Տանն Կի-

լիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո պատրիարքությունը:

Հարցում— Միջեկեղեցական ժողովին առնթին առիթը ունեցա՞ք առանձին տեսակցություններ ունենալու նաև Խորհն Կաթողիկոսի հետ: Երուսաղեմի ողջագործումն էտք և անոր ոգին հակառակ ստեղծված կարգ մը ծանոթ տազնապներ քննվեցա՞ն Ձեր տեսակցությանը ընթացքին: Եթե այո՝ ի՞նչ լուծումներու հանգեցան այդ տազնապները: Օրինակ, ի՞նչ լուծում գտնվեցավ Մարտիրոսյանի:

Պատասխան— Մենք տեսականորեն միասին էինք և հաճախ առիթներ ունեցանք բերեկամական, մտերմական զրույցներու ձևին տակ, խոսքի նստելու այս հարցերուն շուրջ, սակայն որևէ արդյունքի մասին ոչինչ կրնանք ըսել, որովհետև ամեն բան կմնա նույն կացության մեջ, այն վիճակին մեջ, որ ծանոթ է ձեզի, Մեր նամակներուն հրապարակումն հետո, որով կացության մեջ որևէ փոփոխություն չկա:

Հարցում— Կկարծե՞ք, թե Ձերդ Վեհափառության և Տանն Կիլիկիո Կաթողիկոսին միջև կայացած հանդիպումները կրնան լուծել մեր Եկեղեցվո տազնապները, երբ Երուսաղեմի ողջագործումն ասդին միայն ժխտական զարգացումներ արձանագրվեցան մեր ազգային-եկեղեցական կյանքին մեջ:

Պատասխան— Մեր կարծիքով, այդպիսի հնարավորություններ, — այսինքն, մեր առջև դրված հարցերը լուծելու իմաստով, — միշտ կրնան ըլլալ և Մենք հույս ունինք, որ ապագային ալ պիտի կրնան ըլլալ. սակայն, հստակ և պարզ կերպով պետք է ըսել, որ այդ բոլորին հիմքը պետք է ըլլա մեր Եկեղեցվո կանոններուն, օրենքներուն հարգումը, մեր նվիրապետական աթոռներու իրավասությանը սահմաններուն պահպանումը և անկեղծ ու հղթարական սերը և միասնաբար գործելու իղձը: Պետք է հույս հայտնել, որ ապագային այս կացությունը կրնա ստեղծվել, վերջ տալով մեր ներկա տազնապին:

Հարցում— Ցարդ միայն էջմիածնի Մայր Աթոռ զիջողի դիրքին վրա գտնվեցավ: Այնքան ատեն, որ մյուս կողմն զիջողություն չույց չտրվի, Մայր Աթոռը պիտի շարունակե՞ զիջողի դիրքին վրա մնալ, թե ի վերջո պիտի միջոցներ ձեռք առնի:

Պատասխան— Մենք մասնավոր միջոցներ ձեռք առնելու մասին չենք մտածել: Մենք միայն կուզենք, որ բոլոր բարի կամքի տեր հայ մարդիկ խորհուրդ տան Տանն Կիլիկիո Աթոռին, որ ոչ միայն խոսքով, այլ կենդանի գործով հարգեն այն, ինչ որ քիչ առաջ կրեսինք, այսինքն մեր Եկեղեցվո կանոննե-

րը, մեր նվիրապետական Աթոռներու իրավասութիւնը սահմանները և Հայ Եկեղեցւոյ միութեան ոգին:

**Հարցում—** Ձերդ վեհափառութիւնը 1963 տարվան յոյեմբեր 13-ին համայն եպիսկոպոսական ժողովին ուղղված իր խոսքին մեջ վստահեցուց, թե ինքն խոստում առած էր խորեն Կաթողիկոսին Մարսիլիո հարցը կարգադրված նկատելու: Ձեր վերջին հանդիպումին ի՞նչ բացատրութիւն տրվեցաւ այդ հավաստումին խախտումին մասին:

**Պատասխան—** Այդ մասին Մենք ոչինչ կրնանք ըսել: Միակ պարագան, որ պետք է արձանագրել, այն է թե, այնուամենայնիվ, Անթիքիս չկրցաւ իր խոստումը հարգել, և ստեղծվեցաւ այս շատ անցանկալի կացութիւնը: Անցանկալի կացութիւն մը թե՛ Մայր Եթոքի համար, և թե՛, կկարծենք, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին համար, և մանավանդ դժբախտ կացութիւն մը՝ մեր արտասահմանի հայութեան ու Եկեղեցիին համար:

**Հարցում—** Խորեն Կաթողիկոս ընդունե՞ց Ձեր նամակներուն մեջ հիշված հրաւերը՝ եղեռնի հիսնամյակին առթիւ Ձերդ վեհափառութեան կողքին աղոթելու էջմիածնի մեջ:

**Պատասխան—** Այդ մասին Մենք որոշ կարծիք մը չկրցանք կազմել:

**Հարցում—** Պիտի ուզեինք մանրամասնութիւններ ունենալ Ձերդ վեհափառութեան գահակալութեան 10-ամյակին առթիւ կայանալիք հանդիսութեան մասին:

**Պատասխան—** Մեր գահակալութեան 10-ամյակին ծրագրած ենք բացումը կատարել նահատակաց հիշատակին նվիրված հուշարձանին և այդ առթիւ հրաւիրել նաև արտասահմանէն, մեր բոլոր թեմերէն ներկայացուցիչներ, հոգևորական թե աշխարհական, ինչպես նաև քույր Եկեղեցիներու ներկայացուցիչներ, որպէսզի հնարավոր չափով այդ հուշարձանին բացումին տանք հանդիսավոր բնույթ:

**Հարցում—** Երբ քույր եկեղեցիներ միասին համաժողովներ գումարելով կփորձեն միասնականութիւն ստեղծել, կարելի չէ՞ արդոք, որ մեր Եկեղեցին ալ, ինքն իր մեջ, իր նվիրապետական Աթոռներուն մասնակցութեամբ, ժողովներ գումարելով կարենա շատ մը տարակարծութիւններ հարթել և ներքին միասնականութիւն ստեղծել:

**Պատասխան—** Ձեր հարցումը շատ հետաքրքրական է, և կխորհինք, թե ապագային հնարավոր կըլլա այդպիսի ձեռնարկ կատարել, որպէսզի կարենանք մեր նվիրապետական Աթոռներու գահակալներու գործակցութեամբ, վերջնապէս ստեղծել օրինականու-

թեան և միասնականութեան այն պայմանները, որոնց հիման վրա մեր Եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը պիտի կարողանան իրենց բնականոն կյանքը շարունակել՝ ներքին խաղաղութեան և նպատակաւաց աշխատանքի պայմաններու մեջ:

**Հարցում—** Ի՞նչ է Ձեր պատգամը Սփյուռքի ժողովուրդին, եղեռնի հիսնամյակին առթիւ:

**Պատասխան—** Մենք Մեր պատգամը տված ենք մեր ամբողջ ժողովուրդին Մեր կոնդակով և նաև Ս. Մենդյան Մեր վերջին քարոզով: Մասնավոր ավելցնելիք բան մը չունինք: Կիրկնենք միայն Մեր իղձը, որ այս տարի ամբողջ մեր ժողովուրդը, անխտիր, իսկապէս միասնութեան ոգիով աղոթեմք մեր նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար և ինք՝ մեր ժողովուրդը, ներքնապէս իր նահատակներուն տեսիլքով և ուխտով զորացնեն իր հոգին, ավելի պայծառ կերպով տեսնեն մեր ժողովուրդի անցյալ ողբերգութիւնը և այսօրվան վերածնունդը, մանավանդ մեր օրերու հայրենի շեն և ժողկյալ իրողութիւնը, որ հիմքն է մեր հայ կյանքի ներկային և ապագային:

Հայ ժողովուրդը, իր նահատակներուն սուգը իր սրտին մեջ առած, բայց իր հայացքը ուղղելով դեպի Մայր Հայրենիք, անշուշտ ուրախութեամբ և վճռականութեամբ պիտի կրնա նայիլ դեպի իր առավել պայծառ ապագան:

### Այցելութիւն վարժարաններին

Հունվարի 28-ին, հինգշաբթի, առաւոտեան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով և առաջնորդ սրբազանի ընկերակցութեամբ, այցելում է Հելիոպոլիսի Սուրբ Կարապետ վարժարանը և Մերձայնյան մանկապարտեզը:

Դպրոցի մուտքի առաջ, նորին Ս. Օծութիւնն ընդունվում է ազգային վարժարանի տնօրեն Ս. Պապիկյանի, ուսուցչական կազմի և աշակերտութեան կողմից և հուզումնախառն ցնծութեամբ առաջնորդվում սրահ:

Վարժարանի մեծահարգ տնօրենը ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելութիւնը կրթական այդ հարկի ներքո և խնդրում նրա հայրական պատգամն ու օրհնութիւնը աշակերտութեան և հաստատութեան վրա:

Աշակերտները երգերով և արտասանութիւններով իրենց սերն ու հարգանքն են մատուցում Հայոց Հայրապետին, որը խոսք առնելով, օրհնում է կրթական սույն հարկի մշակներին և աշակերտութեանը:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Գալուստյան վարժարան, ուր ընդունվում է տնօրենուհի տիկին Ի. Տատրյանի, ղեկավարողի հոգաբարձության, ուսուցչական կազմի և աշակերտության կողմից «Կեցցե Վեհափառը» ուրախ բացականչություններով և սրտագին ցույցերով:

Գործադրվում է մի պատշաճ հայտագիր՝ հայերեն, արարերեն երգերից, խմբերգերից և արտասանություններից կազմված:

Վարժարանի հարգարժան տնօրենուհին սրտառուչ ուղերձով ողջունում է Հայոց Հայրապետի այցելությունը Կահիրեի այս կրթական հարկից ներս և շեշտում օրվա հանդիսության տպավորիչ և անմոռանալի նշանակությունը:

Այդ Գալուստյան վարժարանի ուսուցչական կազմին և աշակերտությանը ջերմորեն ողջունում է «էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը՝ հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության:

Վերջում խրատական ոգևորիչ պատգամով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնություններն ու ողջունները բաշխելով կրթական այս հարկի աննկուն մշակներին և նրանց շնչի տակ աճող, մեծացող մեր մատուցած հայ նոր սերնդին:

Ժամը 1-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով քաղաքավարական այցելություն է տալիս, ղյալիների Պատրիարքարանում, Նորին Սրբություն Ամբաստանապետ Բ Պատրիարքին:

Պատրիարքարանի շքամուտքի առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը դիմավորվում է քույր և դավանակից եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից և հանդիսավորությամբ առաջնորդվում դահլիճ:

Հուլիսի էր պահը, երբ մի անգամ ևս երկու հնազույն և պատմական եկեղեցիների հոգևոր պետերը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և ղյալոց նորին Սրբություն Պատրիարքը, եղբայրական համույրով և ողջագուրումով, է՛լ ավելի ամրապնդում էին հոգևոր կապը երկու քրիստոնյա ժողովուրդների և եկեղեցիների միջև:

Ջերմ մթնոլորտում, երկու հոգևոր պետերը ողջույնի ճառեր փոխանակեցին և լուսանկարվեցին իրենց շքախմբերի անդամներով:

Համաժողովրդական խանդավառ հանդիպում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ

Հունվարի 28-ին, հինգշաբթի, հգիպտական հայերի ազգային իշխանության նախաձեռ-

նությամբ, կազմակերպվել էր համաժողովրդական հանդիպում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ, երեկոյան ժամը 9-ին, Հեկտոպոլսում, Նուպոյան վարժարանի Պրըգտանյան սրահում:

Ժամը 9-ին, Նորին Ս. Օծությունը մուտք է գործում սրահ, շրջապատված առաջնորդ սրբազանով, շքախմբի անդամներով և ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչներով, ժողովրդական բացառիկ ու ջերմ, խանդավառ մթնոլորտում ու ծափերի տարափի ներքո:

Սրահի խորքում, բեմի վրա, տեղ է դրվում Վեհափառ Հայրապետը:

Հանդիսության բացումը կատարելով, Ս. Արշավ Բահաեա Բոզոյանն ասում է.

«Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի.

Անճառելի հուզումով կողջունենք Ձերդ Վեհափառության ներկայությունը մեր մեջ և փառք կուտանք Ամենակալին, որ Ձեր ճամբան անցուց այս օրհնյալ երկրեն և մեզ արժանի ըրավ կրկին ընդունելու Ձեր օրհնությունները:

Հայ ժողովուրդը խորապես երախտագետ ու շնորհակալ է Ձեր անձին ու գործին նկատմամբ: Ձեր գահակալության առաջին օրեն իսկ, իրագործվեցան այնպիսի աշխատանքներ, որոնք պիտի արձանագրվին մեր պատմության մեջ: Եվ եթե այդ գործերու մասին լռեն մարդիկ, էջմիածնի և մեր տաճարներու վերանորոգված կամարներուն քարերը պիտի աղաղակեն:

Ձեր վերջին կոնդակով՝ նվիրված եղեռնի 50-ամյակին, մենք զգացինք, թե մեր ժողովուրդը որոշած է ապրիլ իր Ս. էջմիածնով, իր պապերուն շունչով և իր վերածնած երկրով:

Ահա թե ինչո՞ւ թանկագին են Ձեր անձն ու գործը մեզի և մենք կաղոթենք առ Աստված, որ երկա՛ր ու քաջառողջ կյանք տա Ձեզի»:

Այնուհետև գործադրության է դրվում Կահիրեի լավագույն ուժերի մասնակցությամբ գեղարվեստական մի հայտագիր:

Հայրո Հինայեկյանը ապրումով արտասանում է բանաստեղծ Ժակ Հակոբյանից Հայ եկեղեցուն նվիրված քերթողաշունչ մի հատված:

Միքե Գաբանֆիլյանը ներշնչումով երգում է «Կոունկ»ը, դաշնակի ընկերակցությամբ տիկին Շաֆե Իփեյլյանի:

Ս. Մամբե արքեպիսկոպոսը վկայություններ է բերում Ազդիս-Աբեբայի այցելությունից՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թողած անձնական տպավորությունների մա-

սին, թե՛ հայ զաղութի ծոցում և թե՛ օտար շրջանակներում:

Տիկին Ալիս Դեպոյանը արտասանում է Ս. Կապուտիկյանի «Մտորոմներ ճանապարհի կեսին» քերթվածաշարից ընդարձակ հատվածներ՝ «սիրվալաշունչ զնացքով ու ոգով»:

Տիկին Անժել Մինիրյանը «Իր քաղցր և հաղորդական ձայնով» երգում է Կոմիտասյան «Քելե բելե»-ն:

Ապա խոսք է առնում «էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, որն իր ճառի մեջ նախ անդրադառնում է Աղդիս-Աբեքայի ժողովի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ և մեր նվիրապետական Աթոռների մասնակցությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության թողած լավագույն տպավորությունների վրա և ապա շեշտում Մայր Աթոռ Ս. էջմիածնի հովանու ներքո և Մայր Հայրենիքի իրականության շուրջ մեր եկեղեցական և ազգային միասնությունը, մանավանդ այս օրերին, երբ բովանդակ հայ ժողովուրդը պատրաստվում է նշելու ապրիլյան եղեռնի 50-ամյակը:

Տիկին Նորա Իփեֆյանը, ապրումով և հուզական շնչով, արտասանում է «Լուսավորչի կանթեղը»:

Օրիորդ Վերա Հացունին փայլուն հաջողությամբ երգում է Ալեմշահի «Իմ երգը»:

Հանդիսության գեղարվեստական բաժնի վերջում ելույթ է ունենում Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, որը հաջորդաբար երգում է «Հայաստան» և «Երբ որ բացվին» երգերը՝ արժանանալով խանդավառ, ջերմ ծափերի:

Ապա, ընդհանուր ոգևորության մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, որին դահլիճը ողջունում է հոտնկայս, սրտագին ծափահարություններով:

«Սիրելի՛ ժողովուրդ.

Մեզի համար շատ փառք է ձեզի հետ խոսիլ և շատ հուզիչ, բայց և փշ մրն ալ դժվար: Մեր մտածումները և զգացումները արտահայտելով, չենք ուզեր, բնականաբար, կրկնություններ բրած ըլլալ: Կուգենք նոր մտածումով մը ձեր սրտերուն, ձեր հոգիներուն մեջ արթնցնել ժողագայթ մը ևս այն մեծ կրակեն, այն մեծ լույսեն, որ մեր ժողովուրդին հոգիին մեջ բացավառ է դառնիլ ի վեր:

Մենք տկար ենք անշուշտ Մեր խոսքերով այդ բոցը, այդ լույսը իր ամբողջության մեջ շողացնելու: Բայց եթե կարողանանք պահ մը ճառագայթ մը գտնել լույս աշխարհ քերել և ապրիլ աղով միասնաբար, կխորհինք, թե

Մենք դրական, կենսաբար գործ մը բրած պիտի ըլլանք: Մանավանդ դուք, սիրելի՛ պանդուխտ գավակներ, կխորհինք, թե կարիք ունիք այդ շեմուքյան և այդ լույսին:

Թերևս այսօր, այս երեկո հավաքված այս տան մեջ, կապասեք, որ Մենք խոսինք Աղդիս-Աբեքայի ժողովին մասին, այդ ժողովին Հայ Եկեղեցվո մասնակցության մասին: Այս բոլորին մասին Մենք փառք մը խոսք քսինք եկեղեցիին. մեջ, ինչպես կհիշեք, և գրեթե ուրիշ ավելցնելիք բան չունինք:

Նեզի հայտնի է արդեն, որ Հայ Եկեղեցին պաշտոնապես այդ ժողովին շնորհակցեցավ: Անհամաձայնություններ, որոնք կային արդեն մեր և Կիլիկյան Աթոռին միջև, վերադարձվեցան՝ Մեր կամքեն անկախ, և արդյունքը այն եղավ, որ Մենք և հորեն Կաթողիկոս համաձայնեցանք միասնաբար շնորհակցիլ ժողովին և ուղարկել Մեր դիտորդներ: Մնացածը գուցե տխուր պատմություն է, և հետևաբար ոչ կարևոր: Մենք անհրաժեշտ չենք գտնել անդադառնալ:

Սակայն Աղդիս-Աբեքայի այդ 10—12 օրերու ընթացքին մենք, Հայ Եկեղեցվո բոլոր ներկայացուցիչներս, մեկ սիրտ և մեկ հոգի եղանք մեկ հարցի առնչությամբ և այս համաձայնությունը մեր մեջ ստեղծվեցավ և ակնբարձր մը մեջ, ինչ որ խորապես մխիթարական է:

Այդ այն պահն էր, երբ մենք երեքս ներկայացանք Վեհափառ Կայսեր, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ներկայացնելով Կայսերին հայ ժողովուրդին սուգը, հայ ժողովուրդի 1915-ի անավոր ողբերգությունը, արտահայտեց հայ ժողովուրդի ապրումները և իր ծանցիկ գալու հայ ժողովուրդի նահատակներուն հիշատակին առջև:

Մեզի համար անփոխարինելի մխիթարություն մը եղավ, երբ Վեհափառ Կայսրը, ֆրիտառյա և մարդասեր Իր հոգիով, Մեզ լավ կհասկցավ, հուզվեցավ նույնիսկ: Մենք իր աշխատուն մեջ կարգացինք այդ ազնիվ հուզումը, երբ ինքն իսկ ոգեկոչեց որոշ դրվագներ Իր հիշողությունեն, 1919—1921 տարիներու շրջանեն: Հետո որքերու մասին խոսեցավ, որոնցմե որոշ թվով ինքը հրավիրեց էր Երթովիա, հայրություն ընելով այդ անտերու թշվառ, ցնցոտիներու մեջ մնացած երեխաներուն:

Կայսրը ավելցուց. «Ինձ համար ես ֆրիտառնական պարտականություն պիտի նկատեմ կիրակի օր գալու Ձեր կողմին և Ձեզի հետ աղոթելու հայ ժողովուրդի բյուրավոր նահատակներու հոգիներուն խաղաղության և անգստության համար»:

Արդարակորով կայսր տակավին ուրիշ մաղթանքներ ալ ըրավ հայ ժողովուրդին ընկալմամբ:

Այսպես է որ կիրակի, 24 հունվարին, մենք միասիրտ և միահոգի աղոթեցինք և այս պահը մեզի համար զգալի ենք եղավ հոգվո մխիթարության, Աղդիս-Արեքայի մեջ:

Նրե ուրիշ որևէ արդյունք կամ նպատակ չկրնայինք իրագործել, բայց միայն այդ սուրբազան պահը կարծեք, որ մենք, Հայ եկեղեցվո ներկայացուցիչներս, Աղդիս-Արեքա մերայինք և մասնակցեցինք այդ օրերու հանդիսություններուն:

Անցյալ անգամ մենք, խոսելով ձեզի, հայտնեցինք Մեր հոգեկան ապրումներու պատկերը: Այս տարի մենք պետք է մտածենք մեր նահատակներուն մասին, պետք է մտածենք մեր ժողովուրդին ներկա կյանքի և աւանդապաշտին հետ կապված բոլոր մեր մտահոգություններուն, և մեր երազներուն մասին: Պետք է մտածենք, թե ամեն մեկս աշխատանքի ի՞նչ բաժին կ'ընենք ստանձնել այդ սուրբազան նահապարհին վրա, ամեն մեկս մեր տեղեն, մեր շափով, մեր ձեռով, մեր հնարավորությանց սահմանին մեջ: Բայց կխորհինք, թե ամեն հայ, ուր որ ալ գտնվի, Հայաստանեն ներս թե Հայաստանեն դուրս, նահապարհ մը պիտի գտնե, որպեսզի 1965-ին իր ապրումները արտահայտե, իր խոսքը ըսե և իր գործը կատարե:

Մենք անցյալ անգամ կխոսեինք ձեզի հետ, թե այդ ապրումը տիրական է հայաստանցիներուն մեջ այս օրերուն և Մենք վստահ ենք, թե Մեր վերադարձին հայաստանցիները հավանաբար Մեզի ոչ մեկ հարցում պիտի ընեն Աղդիս-Արեքայի ժողովին մասին, կամ Մեր և Անթիլիասի հարաբերությանց և կամ այլ հարցերու մասին, բայց պիտի հարցնեն աւետիկ Մեզի, թե արտասահմանի մեր հայությունը ի՞նչ կ'մտածե, ի՞նչ կ'ծրագրե եղեռնի հիսնամյակի առիթով:

Այնտեղ ալ նույն հայերն են, նույն ապրումներով, նույն զգացումներով լեցված այս օրերուն, զգացումներ և մտածումներ, որոնք գուցե երբեմն կարտահայտվին սուրբազան միամտությամբ կամ սուրբազան խենթությամբ, բայց բոլորին մեջ կարտացոլվին մեր հայ ժողովուրդի առողջ բնագործ, ազգային գիտակցությունը և հայ ժողովուրդին բոլոր արդար բաղձանքները իրականացած տեսնելու սուրբազան հույսը:

Եվ կխորհինք, թե այս հոգեկան պատկերը, որ կ'ենթկայացնե մեր ժողովուրդը ամեն տեղ այսօր, ի՞նչ որ մեզի համար մխիթարական և ոգևորիչ է: Ասկից ցույց կուտա, թե մենք,

իրև ազգություն, հակառակ այլևայլ դժբախտություններու, որոնց մեջ են անցած ենք և հասած հաղթական կերպով խաղաղության և վերածնունդի ափին, Հայաստանի մեջ, պիտի կարողանանք այտուեն ևս փայլ առ փայլ ղեկավար հառաջ երթալ, փայլ առ փայլ իրագործելու համար մեր նահատակներուն բոլոր իղձերը:

Անցյալ տարի Հայաստանի մեջ տարօրինակ երևույթ մը պարզվեցավ: Գուցե անսպասելի է ձեզի համար, թե ի՞նչ պիտի ըսենք հիմա: Դուք, արտասահմանի հայերդ, շտապ և չզգացիք:

Այդ ցնցող երևույթն էր հաղթական մոտեր Հայաստան նախապի ախոյան Տիգրան Պետրոսյանին, որ, ինչպես գիտեք, նախապի համաշխարհային ախոյանությունը շահեցավ, ինչ որ անշուշտ հաղթանակի պատվաբեր տիտղոս մըն է և՛ իրեն համար, և՛ մեր ազգին համար:

Իր ժամանումեն քանի մը օր հետո, ինք մեծ ելույթ մը ունեցավ Երևանի ֆիլհարմոնիայի մեծ դահլիճին մեջ, որ հեռուստատեսությամբ հաղորդվեցավ: Մենք էլ միաձնի վեհաճառքը նստած հետևեցանք և լսեցինք:

Տիգրան Պետրոսյան խոսեցավ իր խաղին մասին և բավական հետաքրքրական, թե՛նիկ բացատրություններ տվավ այդ կապակցությամբ, պատմեց, թե ի՞նչպես կ'ընթացի իր մեծ հակառակորդին:

Ազատ կխոսեք և բավական հաջող հայերենով, նույնիսկ տեղ-տեղ գրական դարձվածքներ օգտագործելով, հակառակ որ երկար տարիներ է Վեր, իր գործին բերումով, արդեն Մոսկվա կապրի:

Ինք ծնունդով քիֆլիսցի է: Մրցումներ մեկ ամիսեն ավելի տևեցին: «Ամեն օր երբ տուն էի վերադառնում, — ըսավ Պետրոսյան, — հաշտության ճամբարներ, հեռագրեր հավաքված էին լինում Հայաստանից և Խորհրդային Միության բոլոր անկյուններից եկած: Քաջալերանքի խոսքեր, մաղթանքներ և փառաբանական խոսքեր: Գրեթե ամեն օր ստանում էի նաև ծրարներով ուտելիք: Մի օր, փոքրիկ մի սնդուկ կար Ախալցխայից, լավագույն խնձորներով լեցուն և վրան մի ֆարտ, ուր գրված էր. «Տիգրան ջան, կեր, անուշ արա և հաղթիր»: Եվ այսպես, անընդհատ մի տեսակ ուրախագիտական տակ էի — նամակներ, մաղթանքներ, ծրարներ և այլն: Այս բոլորը ինձ ուրախացնում էին և զորացնում, բայց միաժամանակ երկյալ էի զգում, թե ի՞նչ կլինեք հայ ժողովրդի վիճակը, եթե ես պարտվեի:

Եվ հետևաբար, սկսեցի այլևս մտածել ո՛չ թե իրև Տիգրան Պետրոսյան, իրև շախմատ

տի ինչ որ մասնագետ, այլ իբրև հայ ժողովուրդը խորհրդանշող մի անձ, որ իրավունք չունի պարտավելու:

Այս ոգով, այս ապրումներով, ես իմ առավելագույն ճիգերը լարեցի և հաղթեցի: «Սա նշանակում է, որ եթե մի ամբողջ ժողովուրդ մի բան կամենա, կկատարվի»:

Ահա պատկեր մը մեր հայրենի կյանքին, որ կխորհրդի, թե մեզ կրնա մղել շատ մը խորհրդածություններու, մանավանդ այս օրերուն, երբ մենք կանգնած ենք մեր պատմության ամենամեծ ողբերգության հիշատակին առաջ:

Արդեն Ս. Մենդյան Մեր փառքին մեջ Մեր մտքերը ամփոփած են: Կխորհրդի, թե այն, ինչ որ հնարավոր է, և այդ հնարավորին առավելագույնը, մենք պետք է կարողանանք կատարել մեր նահատակներուն հիշատակին ոգեկոչման առթիվ: Ամեն բանե վեր, սակայն, կխորհրդի, թե հիմնական է, որ հայ ժողովուրդը այս առիթով իր ներքին միասնությունը ամրապնդե, մանավանդ նոր սերունդին փոխանցե այդ հզոր շունչը հայկական, և՛ հավատքի, և՛ ուխտի, որ մեր հայրերը, իրենց կյանքին իսկ գնով, կարողացան բարձր պահել դարեր շարունակ:

Նահատակվելով իսկ, անուն փրկեցին իրենց պատիվը, փրկեցին իրենց ապագա բոլոր երազներու իրականացման հնարավորությունները: Ճանապարհները վերստին բացվեցան մեր օրերուն պայծառ կերպով: Մենք այդ գիտակցությամբ պետք է համախմբվինք թե՛ իբրև եկեղեցի, և թե՛ իբրև եկեղեցական կազմակերպություններ, և թե՛ իբրև ժողովուրդ, որպեսզի մեր պարտքը ամբողջությամբ կատարենք այս տարի մեր խղճին առջև, մեր ժողովուրդին և մեր պատմության առջև: Մենք, պայծառ հեռանկարներ ունենալով մեր գիտակցության առջև, ազգովին հառաջ կընթանանք, որովհետև այլևս մենք թշվառ և անտեր ժողովուրդ մը չենք, հուսահատ բազմություններ չենք, բափառական, լացի և ողբի հավաքականություններ չենք, այլ ազգություն ենք, երկիր ունենք, Մայր Հայրենիք ունենք, պետականություն ունենք, ուր այսօր կապրին ավելի քան երկու միլիոն հայեր, իրենց բազմաթիվ ուժով, իրենց մտքի լույսով և հանճարով, հաղթահարելով ամեն դժվարություն: Քառասուն և ավելի տարիներ առաջ, մեր հայրենիքը փառափառ եղած երկիր էր, մեր հայրենիքը աղֆատ էր, անդունդի եզերքին հասած էր, և մեր հայրենիքը գրեթե նոր կյանքի մը հնարավորություններն զուրկ էր. բայց այդ բոլոր դժվարությունները տակավ հաղթահարվեցան և տա-

կալին հաղթահարվելիք դժվարություններ կան, սակայն քաջ առ քաջ, մեր ժողովուրդը համառ աշխատանքով և սրբազան կիրքով և հայրենասիրությամբ, կշեցնե իր Մայր երկիրը, և միշտ իր աչքերը հառած է դեպի ավելի լուսավոր և պայծառ ապագան:

Ներկա Հայաստանի իրականությունը, մեր բոլոր ապագա հույսերու իրականացման հանապարհին վրա, ամենալուսավոր և ամենապայծառ իրականությունն է, այն պատվանդանն է, որուն վրա հետգետե պիտի բարձրանա մեր պատմության նոր շրջանը: Այսօր գուցե առաջին հարկն է որ կամրացվի, որպեսզի վաղը, այդ նույն շենքին վրա, երկրորդ հարկն ալ բարձրացնեն մեր ժողովուրդի զավակները:

Հետևաբար, մենք պետք է մեր պարտքը կատարենք այս սուգի տարվան ընթացքին և ուխտի տարվան ընթացքին, և ըլլանք լավատես, համախմբված մեր սրբազան զգացումներուն և մտածումներուն շուրջ, մեր հայրենիքի ու ժողովուրդի գերագույն շահերուն շուրջ:

Մենք, իբրև Հայոց եկեղեցվու Հայրապետ, անշուշտ եկեղեցական գիծով Մեր ծագիրները ունինք և պիտի գործադրենք: Անոնց մասին Մենք անցյալ անգամ խոսեցանք, չենք ուզեր կրկնել:

Սիրելի՛ ժողովուրդ, Մենք կրթմունքի մեզմե անհա նույն այս հոգեկան ապրումներու արկածումով: Մեր խորհուրդն է և պատգամը կրկին անգամ՝ սեր և միություն մեր կյանքին ներս, հավատարմություն և նվիրում դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի հայրենի աշխարհը: Սիրեցե՛ք մեր Մայր Հայաստանը, սիրեցե՛ք Ս. Էջմիածինը, սիրեցե՛ք մեր հայաստանցի բույրերը և եղբայրները, որովհետև, վստահ եղե՛ք, որ անոնց սրտերը բացված են դեպի մեզ, և կկրկնենք, ինչ որ փչառաջ կըսեինք, Մեր վերադարձին կսպասեն, որպեսզի մեր միության, մեր սիրո, մեր հայրենասիրության մասին խոսինք և այդ պիտի ըլլա անոնց ճշմարիտ ավետիս մը:

Այսօր Մենք վարժարանները այցելեցինք, կկարծենք առաջին վարժարանին մեջ էր, Նուպարյան վարժարանին մեջ, երբ Մենք աշակերտներուն հարց տվինք. «Դուք կհասկընա՞ք Մեր խոսածը. հայրենի լավ կհասկընա՞ք». բոլորը մեկ միաբերան, «Այո՛» գոչեցին: Բայց Մենք ուրիշ պատկեր մըն ալ կհիշենք Հյուսիսային Ամերիկային: Հանախ փոփրկներուն կհարցնեինք. «Անունդ ի՞նչ է». Մեր երեւր կնայեին և չէին կրնար պատասխանել, չէին հասկնար: Մեր սրտեն արյուն կերթար անշուշտ:

Այսօր, սակայն, նուաբայան վարժարանին մեջ, այդ երեխաներու հաղթական պատասխանը, քե «Մենք հայերեն գիտենք և միայն հայերեն» Զեզ», անշուշտ որ Մեր սիրտը քեցուց անհուն ուրախությամբ: Կիտրինք, մե Մեր Հայաստան վերադարձին, այս փոփոխությունն պատասխանը լավագույն նվերը լիպիտի բլա հայաստանցի ձեր եղբայրներուն և քույրերուն:

Անոնք ձեր արյունն արյուն, ձեր հոգին հոգի են: Մենք կմաղքենք, որ Աստուծո օրհնությամբ հայ ժողովուրդը ապրի, տակա արտասահմանի պայմաններուն մեջ, և անայնպիսի ու անաղարտ պահն իր հայկական հոգին, միշտ մեկ և անբաժան Մայր Հայրենիքեն, Ս. Էջմիածնեն: Այս նշանաբանով մենք: Իբրև ազգ և իբրև եկեղեցի, պիտի համադրենք, և արժանի պիտի բլանք առավել համադրություններու, առավել փառքի, Աստուծո օգնությամբ:

Մնացե՛ք խաղաղությամբ, հաջողությամբ և ձեզի:

Հունվարի 29-ին, ուրբաթ, առավոտյան ժամերին, հյուրանոցի իր հարկաբաժնում, վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել նախ «Հուսաբեր» օրաթերթի և ապա «Ջահակիր» շաբաթաթերթի խմբագրական մարմինների այցելությունը:


Ժամը 11-ին, նորին Ս. Օծությունը, իր շքախմբով և ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչների ընկերակցությամբ, այցելում է Մուհամեդ Ալի Թագավորական պալատ-թանգարանը:

Երեկոյան ժամը 4-ին, Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելում է Կահիրեում սովետական դեսպան Նուֆես Վաղիմիր Յակովլևիչին: Նորին Ս. Օծության և Կահիրեում սովետական պր. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, մտերմական մթնոլորտում:

#### Վեհափառ Հայրապետը մեկնում է Փարիզ

Հունվարի 30-ին, շաբաթ, հեամիջօրեի ժամը 1.30-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Եգիպտոսի հայ գաղութից և իր շքախմբով մեկնում է Փարիզ՝ հովվապետական այցելություն:

Ողջերթի համար Կահիրեի միջազգային օդանավակայան էին եկել թեմակալ առաջնորդ Ս. Մամբե արքեպիսկոպոս Սիրունյանը, Ալեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ Ս. Զավեն վարդապետ Զինչիյանը, Կահիրեի և Ալեքսանդրիայի ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչներ, ազգային վարժարանների տնօրեններ, ուսուցիչներ և աշակերտներ, մշակութային սրահների, հայ մամուլի ներկայացուցիչներ և հոծ բազմություն:



«Կորին առիծուն Եթովպիոյ»

Ամենայն Հայոց Հայրապետին ճանապարհում են նաև հարանվանությունների ներկայացուցիչներ:

Հունվարի 30-ին, շաբաթ առավոտյան, Եթովպիայի Կայսրի բարեհաճ կարգադրությամբ, Կահիրե է հասնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին նվիրված կորյունը, որը Կահիրե—Մոսկվա օդային ճանապարհով ուղարկվում է Երևան:

Կորյունը մեկ տարեկան է և լավագույն նմուշը Եթովպական առյուծների ցեղի:

Եթովպական կորյունը Վեհափառ Հայրապետի կողմից նվիրվում է Երևանի կենդանաբանական այգուն 1965 թվականի փետրվարի 28-ին, երբ նորին Ս. Օծությունը ժամանում է Մայր Աթոռ:

#### Զառասուռն րոպե Աթենքում

Հունվարի 30-ին, շաբաթ, հեամիջօրեի ժամը 3-ին, Եթովպական ինքնաթիռը, որով ճամբորդում էր Վեհափառ Հայրապետը, խաղաղ վայրէջք էր կատարում Աթենքի էլենիկայի օդանավակայանում:

Մի քանի ժամ առաջ, Կահիրեից հունահայ թեմական խորհրդին տրված հեռագիրը ավետել էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը Հելլադայի ափերը:

Թեմական խորհրդի ղեկավարությամբ, հունահայ բոլոր կաղմակերպության ներկայացուցիչները, այդ թվում Հայկական բա-

րեգործական ընդհանուր միության վարչության տիկնանց օժանդակ հանձնաժողովի բոլոր անդամները, հավաքվել էին օդանավակայան, իրենց «հարգանքի և երախտագիտության տուրքը մատուցանելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ստանալու Անոր օրհնությունները»:

«Անոնք կարոտը ունեին աշխարհի բոլոր հայության կրոնական Պետը մոտեն տեսնելու և օրհնությունը ստանալու, որովհետև իբրև շերմեղանդորեն հավատացյալ հայեր, դարերու սրբությանց նվիրականությանց հանդեպ՝ անհուն բերկրանքով լեցված, կմտաբերեին մանավանդ ազգային-եկեղեցական այն անհողողող պայքարը, որ կմղվեր ու կմղվի այսօր իսկ հունահայոց մեջ, ընդմեջ էջմիածնականության և անթիլիասականության:

Հունահայ գաղութի էջմիածնասեր տարրը իրավունք ուներ հրճվելու և ճառագայթվելու, երբ Ս. էջմիածնի պայծառացյալ Պետը, իր օրհնաբեր այցելությամբ, իրենց հավատքը կզորացներ» («Երկիր», 6 փետրվարի 1965 թ.):

Խանդավառ և սրտագին արտահայտությունների ներքո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է պաշտոնական հյուրերին հատկացված ընդունելության սրահը, ուր հավաքված բազմությունը, որոտընդոտ ծափերով, ուրախության անկեղծ արտահայտություններով դիմավորում էր նորին Ս. Օծության շնորհաբեր և անակնկալ այցելությունը: Երեք փոքրիկներ գեղեցիկ ծաղկափնջեր են նվիրում Հայոց Հայրապետին, արժանանալով նրա սուրբ օրհնության, մին՝ թեմական խորհրդի, երկրորդը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության անունից: Տիկին Զ. Գալփաբյանը Ս. էջմիածնին նվիրում է գեղեցիկ և թանկագին մի անոթ:

Հունահայոց թեմական խորհրդի ատենապետ Ա. Պետրոսյանը Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը ողջունում է հետևյալ ուղերձով:

«Վեհափառ Տեր.

Հանուն հունահայ գաղութի էջմիածնական ժողովուրդին, հարգանքով, սիրով և երախտագիտությամբ բարի գալուստ կմաղթեմ Ձերդ Վեհափառության, որ բարեհաճած է Ազդիս-Աբեբայի քրիստոնեական ժողովին հետո, դեպի Ս. էջմիածին մեկնումի ճամ-

բուն, Աթենք ևս հանդիպիլ և իր բարձր օրհնությունները տալ հունահայ էջմիածնասեր ժողովուրդին:

Վեհափառ Տեր, անշուշտ Ձեր բարձր հիշողության մեջ է այս վայրկյանիս, երբ Աթենք կգտնվիք, Ձեր վարդապետական առաջին հանգրվանը, Ակրոպոլիսի պատմական շինչն շարանին հովանիին ներքև, ճառագայթներն շարանին հովանիին ներքև, անհողված, պայծառացած և լուսավորված, անհողողող աշխարհի հայությունը կառաջնորդեք հոյակապ նշանաբանով մը՝ սիրել դարերու Սրբություն Սրբոց Ս. էջմիածինը, հայ հավատքը և հայրենիքը:

Հունահայ գաղութը այսօր հպարտ է Ձերդ Վեհափառության մեր մեջ ներկայությամբ, և մատուցանելով խոնարհաբար մեր որդիական հարգանքները, բարի գալուստ և բարի ճանապարհ կմաղթենք և կցավինք, որ Ձերդ Վեհափառությունը ավելի երկար վայելիլու բախտեն զրկված ենք:

Կմաղթենք, որ ավելի լավագույն օրերու և պայմաններու մեջ, երկարորեն կարենանք վայելիլ Ձեր օրհնաբեր ներկայությունը Աթենք:

Կեցցե՛ մեր Վեհափառ Հայրապետը:

Նորին Ս. Օծությունը, խորապես հուզված Հելլադայի ասպնջական հողի վրա ապրող իր եկեղեցասեր և հայրենասեր զավակների սրտագեղ արտահայտություններից և խանդավառ ցույցերից, խոսում է նրանց հստակ, հարազատ և հայրական շեշտով, իր ներաշխարհը փոթորկող ապրումը փոխանցում բոլոր ներկաներին, հուզում բոլորի սրտերը և լցնում Ս. էջմիածնի լույսով և հայրենիքի սիրով:

Այս կարճ, բայց պատմական և հաճելի հանդիպումը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Երեսուն րոպեները անցել էին արագ, բայց բովանդակալից:

Կամրջակի վրա կանգնած, Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին: Քիչ հետո, ինքնաթիռը թողնում է Աթենքը և ուղղություն է վերցնում դեպի Ֆրանսիա, ուր վայրէջք է կատարում երեկոյան ժամը 7-ին:

Ֆրանսիայում մեկ ժամվա հանգստից հետո, ֆրանսիական «Կարավել» ինքնաթիռով, Հայոց Հայրապետը իր շախմատով մեկնում է Փարիզ, ուր հասնում է գիշերվա ժամը 10-ին:

